



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՅՈՒՅՑԵՐԻՏԱԿԱՆ
ԳՐՈՂՆԵՐ

ՊԱՅԱԶԱՏ

ՄԱՆՐ ՄԱՐԴԻԿ

ՊԱԼԱՄՎԱՆՔՆԵՐ

ՊԵՏՇՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1931

891.99
Դ-19

19 NOV 2011

ԿՈՍԵՐԻՑ ԳՐՈՂՆԵՐ

391-99
7-19

ՊԱՅԱՋԱՆ

~~ԱՎ~~ *ԱՎ*

ՄԱՆՐ ՄԱՐԴԻԿ

ՊԵՏՄՎԱՆՔՆԵՐ

139/4-157 1464

~~98/11~~



ՄԱՆՐ ՄԱՐԴԻԿ

ՔԱՂԱՔԸ

Զաղարաձեւ հովտում ընկած եր այն քաղաքը, վորի մեծ կայարանում գնացքների յերկաթե ուղիները խաչվում եյին իրաբ:

Քաղաքը լեռներ ուներ գոտու պես կապած: Գետը հոսում եր քաղաքի միջով ու կիսում յերկու մասի:

Քաղաքի ծայրամասերը փողոցներ ունեյին, վորոնք քալարվում եյին խառնիխուռն շենքերի պատշգամբների տակ: Փողոցները միանում եյին մյուսներին, մյուսներն ավելի լայներին: Փողոցները միանում եյին այստեղ ու այնտեղ բացվող հրապարակներին, լայնանում և հասնում քաղաքի ավելի շքեղ ու բանուկ կենտրոնական մասերը: Քաղաքում փողոցները ճյուղավորվում եյին ամեն ուղղությամբ: Գլխավոր փողոցներն ապակու նման հարթ եյին ու զուգահեռ ձգված, ակոսված ու լսելսեր կային, վորոնց վրայով ալանում եյին տուփերի պես դեղին ու կարմիր տրամվայները:

Ուետինի և բենզինի հոտով հեվում եյին ու շտապանցնում՝ ավտոները, ավտոբուսները:

Ու ինչքա՞ն կոշիկներ եյին տրորում մայթերը:

Քաղաքի ծայրամասերում գործարաններ կային:

Առավտոները, այսինքն մութուլուսին, քաղաքի փողոցները առվորականից ավելի խաղաղ եյին՝ յերբ քաղաքը քնած եր լինում: Յերբ քաղաքը քնած եր լի-

ՊԵՏՑՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ ՊԱՏՎԵՐ 1090 ԳՐԱՌԵՎԱՐ 6089 (Բ) ՊԵՏՑՐԱՆ 1508 ՏԻՐԱԺ 3000

նում, գործարանների շահկները տարածվում եյին քաղաքի վրա: Յեվ պարկից յելած առաջին տրամվայը սլանում եր շահկների կողմը, գործարաններից հեռու բնակվող բանվոր ուղևորներով:

Հետո գումատվում եյին քաղաքի լույսերը, յերբ նրանք ել մարում եյին, արևի ճառագայթների առաջին ցոլքը յելնում եր հայլող աստղերի հորիզոնին հատվող փողոցի վերջին ծայրից և պալղում՝ ոելսերի, թելերի ու կտուրների վրա: Քաղաքի այդինների, վորոնց միջով հոսում եր գետը, ծառերի կատարները թվում եր այրելում եյին բոցում:

Արթնանում եր որը՝ քաղաքի, գործարանների ու այդինների վրա: Արթնանում եյին քաղաքի բնակիչներն առորյա հոգսերով, հույզերով ու գործերով:

Շատշատ տարիներ առաջ, յերբ մարդիկ ուղևերով եյին ճանապարհորդում, քաղաքի բաղնիսների թաղում քարվանսարաններ եյին շինել: Քարվանսարանները կիսակործան եյին, մեկ-մեկ մարդիկ եյին դնում այն թաղը. նրանք այնպես նախշուն ու պայծառ ներկեցին ունենում իրենց տուփերում: Հետո սպիտակ քաթանների վրա նկարում եյին փողոցները, տները, վորոնց հիմքի կապարագույն ծանր ժայռերը քերելով անցնում եր Քուռը: Ու ամեն ինչ, թե ջրերի վրա կախված չայբանանների պատշաճում բները և թե պարսկական կապույտ մզկիթն արտացոլվում եր նրա կապույտ ջրերում:

Մութուլուսին, յերբ քաղաքի փողոցները ջրում եյին, կամ յերբ լույսերը գումատվում ու գործարանների շահկները տարածվում եյին քաղաքի վրա, կա-

մուրջի կողքի պարսկական կապույտ մզկիթից դեղին միրուքավոր մարդը յերգում եր այնպես դառնաթով ու յերկար: Նրա ձայնը տարածվում եր քաղաքի յետին թաղի տների ու ծոված կտուրների վրա: Զայնի ամեները կպչում եյին տների բարձր պատերին և հանգաբաժնում կամաց. նրանք չեյին հասնում այդ թաղի մյուս, ավելի բարձր կողմը, վորովհետեւ այնտեղ փողոցներ կային բանուկ, ուր քաղաքի ավելի չքեղ մասն եր:

Կամուլյուտ մզկիթի կամուրջից այն կողմը, ավելի վերև, ուրիշ կամուրջներ ել կային, կամարակապ ու տարրեր: Կամարակապ կամուրջից վերև, մանկական խաղալիքների պես զույգ նավակների վրա տնակներ կային ու նրանց կիսականաչ կողերին ճառագայթածեթեեր եյին պտավում:

Քաղաքի ջրաղացներն եյին նրանք:

Քաղաքի հարավային բլրին, իրարից մի քանի հարյուր քայլ հեռավորության վրա, մնացել եյին բլրութի թափթփած պատերն ու պարիսպները: Բերդը հեռվից շիկացած հոկա թոնիրի յեր նման:

Ավելի արևմուտք, քաղաքի ամենամոտ ու ամենաբարձր բլրի վրա աշխատում եյին յերկու տրամվայ, վորոնցից մեկն իջնում եր, մյուսը՝ յելնում:

Քաղաքը յեկեղեցիներ ուներ շատ: Տների տանիքներից բարձր եյին նրանց գմբեթները: Յերբ արևն իջնում եր տանքների ուսերին, իրիկնամութի մեջ պըպըղում եյին յեկեղեցիների դմբեթներն ու խաչերը վոսկեղոծ: Մայրամուտին քաղաքը կարմիր-կարմիր հրով եր վառվում, պապղում եյին աների պատուհանների ապակիները վոսկեփայլ ու հետո տանիքների վրա կախվում եր խավարը դժնի: Հեռագրասյան ուսերից

տաեղնամել լույսերը պայծառ թափվում եյին առա-
տանիքների, բակերի ու փողոցների վրա:

Քաղաքի կենտրոնական հրապարակից դեպի արե-
վելք մի փողոց եր ճգվում: Այն փողոցը գալարուն եր
և յերկար, խորդութորդ մայթեր ուներ նա, խանութներ
կային ցածրիկ ու շարեշար: Բազաղի, վոսկերչի, ճոնի.
դերձակի, գոտիներ կարողի նույնանման խանութներ:
Հենց այդ շուկայում, այդ մանրավաճառների, ար-
հեստավլորների խանութների շարքում, կային ցուցա-
նակներ ուրիշ, մեծ ու պետական:

Մի որ այդ փողոցով առաջին տրամվայն անցավ
փոքրիկ խանութների շարքով. նեղ փողոցը հետո լայնա
ցալ, սակայն նրա մյուս մայթն ելի նեղ մնաց: Յեկ յեթե
այն նեղ, կոտրված մայթով իջնեյին դեպի վայր,
կրացվեր նորից մի փոքրիկ հրապարակ, շուկա, մար-
դիկ-մարդիկ, յեռ ու զեռ, աղմուկ մինչև կեսոր: Հետո
մաքրում եյին ձմերուկի, սեխի կլեաները. յելնում եյին
ճանճերն ու փոշին: Դիմացը պարսկական կապույտ
մզկիթներ. աջ՝ հին շայխանաներ, մրդավաճառների
խանութներ. ձախ՝ կոր ու նեղ փողոց, մանրավաճառ-
ներ, ափելի այն կողմը, ամպի պես տիխուր, մռայլ ու
վես կանգնած եր «Սիոնի» հայակապ յեկեղեցին: Կոր
փողոցի ու մզկիթի մոտի շենքերի արանքում բացվում
եր մի ուրիշ փողոց, հասնում եր գետը և անցնում կա-
մուրջը: Կամուրջի այն կողմն ելի մի քանի միանման
խանութներ կային:

Ամենավերջին խանութի պատերը ծնիվածք կամ
գույն ունեյի՞ն. —վո՛չ: Յե իրար վրա դարսված ժամ-
գագույն կղմինտրները կարծես թե պատրաստ եյին

պառկելու մինչև փողոցի մյուս ափը: Փոքրիկ խանու-
թի ծուռ պատից թեք կախված եր մի ցուցանակ և կար-
ծես մեկն իր ափը թաթինել եր ցեխում ու զարկել նրա
մեջտեղը, այն ինչ նկարված եր մի հատիկ տրեխ: Խա-
ռութի դուռը տախտակի փեղկեր ուներ ու նրանց գույ-
նը խունացել եր վաղուց: Յերբ արևը նայում եր խա-
ռութին, նրա պայծառ ճառագյթների տակ հալվում եր
փեղկերի յուղաներկն ու արտասուքի կաթիլների պես
սահում դանդաղ: Խանութի ներսի պատերը սև եյին,
անձրեխց կախվել եր առաստաղի մի ծայրը, առաս-
սաղն ել հազիկ յերկու մարդաբոյ լիներ: Խանութում
յերեք հոգի հազիկ կարողանային կամ կանգնել կամ
թե՝ վոչ. վորովհետև չորրորդի մի վոտքը ստիպված
մնում եր փողոցի մայթին:

Յե՞րբ եր շինված այդ խանութը, Ունանը լավ չեր
հիշում կամ ո՞վ եր շինել՝ նույնպես:

Ունանը նիհար եր ու բարձր հասակ ուներ, չեչոտ-
ված դեմքին հորթի կաշվի մազի պես կարճ, գգգղված
ցանցառ միրուք: Ավելի մեծ, բարակ ու սուր քթի
տակ բեղերը ծածկել եյին նրա շրթերը: Խոսելիս նա
սրում եր բեղերը: Նա հոգատար եր գեսի իր պատկա-
ռելի բեղերը: Նրա գլխի մազերի, գույնի կամ թե ձևի
մասին խոսք լինել չեր կարող, վորովհետև Ունանին վոչ
վոք չեր տեսել առանց գլխարկի: Նույն իսկ ինքը, Ու-
նանը, խոստովանվում եր, վոր չեր հիշում, յե՞րբ եր
գնել իր գլխարկը: Ունանն այդ հին, փոշոտ ու խունա-
ցած գլխարկի մեջ եր գտնում իր ամբողջ պատիկն ու
անունը: Տեսնողներն ասում եյին, վոր գիշերները քնե-
լիս պառկում եր գլխարկով: Բայց գլխարկի տակից նա-
յուամ եյին նրա անթափանց, դժգոհ աչքերն ու հան-
գիստ, միամիտ, յերերվող գեմքը:

Աւանութը կպած եր յերկաթե մոխրագույն
մի դարբասի, վորի ներսը մի փողոց եր և խանութներ
ոլի:

Մոխրագույն դարբասի ներսի խանութների շարքից
դեպի ձախ մի քանի փողոցանման անցքեր եյին գնում,
վորոնք վերջանում եյին մեկ ուրիշով: Փողոցանման
բոլոր կիսամութ անցքերն ապակե տանիքներով եյին
ծածկված: Այդ փողոցանման անցքերի յերկարք խա-
նութները միշտ փակված եյին ժանդու կրղեքներով:

Գլխավոր շարքում, խանութների բազմաթիվ ցու-
ցանակներից մեկի վրա նկարված եր թոփերով ծաղկա-
վոր չթեր ու չալեր և միենույն ժամանակ գրված «Վա-
ռիլ Մառանջով»:

Վասիլն իր սապողի ճիտքի նման վիզ ուներ ծալ-
քերով, ի'սկ և ի'սկ սխտորի պես աչքեր՝ աչքեր խորա-
մանկ հայացքներով ու շարքուն: Կեղծավոր ժպիտով,
կապույտ շրթեր ուներ նա: Նրա գլխի մազերը նման
եյին վոզնու փշերի:

Վասիլն տեսնողն առաջին հայացքից կտսեր.

— Ինչ լավ մարդ ե:

Յերկրորդ բրդելին վոչինչ չեր ասի: Յերրորդ բո-
պեյին կտսեր.

— Սատանան գիտե, թե ի՞նչ մարդ ե նա:

Քաղաքի այդ խանութների առորյան հոսում եր
գանդաղ, տաղտուկ ու ձանձրալի: Ամեն որ նույնն եր
ելի, մարդիկ մտնում եյին խանութները, գուրս գալիս,
ուսկարկում յերկար, որորվում մայթերի վրա:

Այսպես եյին, անցած որերի յերազներով ու փառ-
քով ապրող այդ տխուր մարդիկ. քաղաքի մանր վա-
ճառականները, արհեստավորները և նրանց խանութնե-
րի հաճախորդները:

Ու ամեն որ յերկաթե մի բոռնցք հարթում եր այդ
քաղաքի փոքրիկ խանութները:

«ՑԵԹԻՄ ԳՅՈՒՐՁԻ»

Դիմացը բերդն եր. նրա տակը խանութներ ելի՝
փոքրիկ ու հին:

Բերդը բարձր եր պարսկական կապույտ մզկիթից,
բերդը կախվել եր տանիքների վրա ու ատամնաձե պա-
րիսպներ ուներ նա:

Իմերել իմկոյի խանութը, այսինքն «ՅԵԹԻՄ
ԳՅՈՒՐՁԻ» տբախտիրը բացվում եր բոլորից վաղ, յերբ
մյուսները փակված եյին լինում էին: Յերբ մյուսները
փակված եյին դեռ, նրանց տերերը լինում եյին իմերելի
տրախտիրում:

Տրախտիրը նեղ գուռ ուներ ու լայն պատուհան:
Պատուհանի անիմայլ ապակու վրա նկարված եր գառան
գլուխ, մի մեծ կաթսա, ծուռ պոչով շերեփը վրայից
կախված: Խանութը նեղ եր ու յերկար: Մի քանի սե-
ղաններ ուներ նա, վորոնց վրա փայլում եր յուղի բա-
րակ շերտը: Խանութի խորքում մի պլիտա կար, վրան
այն բոլորը, ինչ նկարված եյին պատուհանի ապակուն:
Տրախտիրի խորքն ավելի խավար եր ու մի փոքրիկ
գուռ կար: Այնտեղ եր ըրի ծորակը: Այն մասում հա-
տակին թափված եյին վոչիսարի տոտիկներ. մեկը մաք-
րում եր նրանց, մյուսը ցինկե ամանի սապնաջրում
լվանում եր խաչի փայտյա դղալներն ու կավի փոքրիկ
պնակները:

Իմերելն ուսի նեղ ու կավագույն փեշքրով մաքրում
եր սեղանների յերեսների լուղի շերտը. մաքրում եր ու
յերբում.

Յերրուն միդի՛ս ծղալլելա՛:

Կոխտա՞ դոգո՞ գենացվալե՞:

Ինչքան մաքրում եր, այնքան փայլում եր յազի
բարակ շերտը:

Իմերել իլիկոն մտածում եր ու զարմանում, վոր
մարդիկ որվա թվերն ու որերի անունները չեն մոռա-
նում. գո՞ւցե մոռանում են, հը՛, ո՞վ դիտե, եսոր ուր-
բաթ ե, բայց շաբաթ են կարծում: Իմերելն ավելի զար-
մանքով եր մտածում, թէ ի՞նչպես ու ինչի՞ց յեղավ,
վոր «Նիկոլոզի» ռեժիմին արծաթ ու սև կոպեկներ
եյին, հետո կոփվներ յեղան, իր փոքրիկ յեղբորը զին-
վոր տարան, կոպեկները հասան հազարների, միլիոն-
ների, միլիոններից են կողմն ի՞նչ անուն եր լինելու,
չգիտեր: Քանի՞-քանի տեսակ փողեր յեղան: Հետո
կոփվները խաղաղվեցին, նորից արծաթ ու սև կոպեկ-
ներ դարձան. բայց հին ռեժիմն ինչու չմնաց:

Ամեն որ, առավոտյան մութուլուսին, «Յեթիմ
Գյուրջի» տրախտիրի առաջին հաճախորդը վարսավիրա
Դարչոն եր լինում: Նա նստում եր յերկար սեղաններից
մեկի առջև, կրկնվում եր ամենորվա սովորական փոք-
րիկ զրույցը, հետո իմերելը խաչի պնակը դնում եր
նրա առջև, նստում եր կողքին ու հարցնում «աշխարհի
թաղա խարարներից». ինչպես ինքն եր ասում: Իմերել
իլիկոն հետաքրքրվում եր և իրավունք ուներ հարցնե-
լու, վորովհետեւ վարսավիրան լավ դիտեր այդ փոքրիկ
խանութների և նրանց տների ամեն մի նորությունը,
դադտնիքը, առորյա խոսակցությունը, մի խոսքով՝
այն ամենը, ինչ կատարվում եր այդ փոքրիկ ու մեծ
խանութներում. Նա դիտեր, սկսած խանութներից մին-
չև տուն, յերեկ ո՞ւմ տանն ո՞վ ե հյուր յեղել, կամ
ի՞նչ է խոսվել մի վորեւ տեղ չորս պատերի մեջ. ո՞ւմ
կինը յե՞րբ ե բաղնիս գնացել, բոլորը-բոլորը:

Փաքրիկ խանութների ու նրանց տների առորյան
վորութեղից եր իմանում այդ վարսավիրան-դժվար ե ա-
սել, գուցե հենց իրենից իմանայիք:

Նույնիսկ նա իր սեփական կարծիքն ուներ քաղա-
քական խոչոր դեպքերի մասին, վորովհետեւ յերեմն
աղատ ժամերին «կազեթ» եր կարդում: «Երեք կազեթ»
ստանում եր իրա անունով, խանութի համար, վոր հա-
ճախորդները հերթի սպասելիս մի վորեւ բանով զբաղ-
վեն: Գուցե և իրոք ստանում եր, զարմանալու ի՞նչ կա,
բայց վոչ-վոք չեր յերաշխավորում: Իրեն ասելով, ին-
չը «պերվոկասնի» մագաղին ուներ: Յեզ իսկապես,
նրան խանութները այդ թաղում ճանաչում եյին վոր-
պես «Բայց» պարիկմախերսկի խանութի տեր: Վերջա-
պես վո՛չ-վո՛ք այդպես չեր ճանաչի նրա փոքրիկ խա-
նութը, յեթե ինքն իր «մագաղին» այդպես չանվա-
ներ:

Նա մտադիր եր շուտով տեղափոխվել քաղաքի կենտ-
րոնական մասերից մեկը:

Քիչ հետո ուրիշ հաճախորդներ եյին գալիս, ու-
րիշների հետ գալիս եր դռնապան կուդրաթը: Տրախտի-
րի ճենմի հոտին ավելանում եր՝ քրտինքի, հողի, կրի
և ելի ուրիշ հոտեր: Այդ հոտերը նրանք բերում եյին ի-
րենց հին չորերի ու հողոտ ձեռքերի հետ:

Պարիկմախերն ու իմերելն ընդհատում եյին խո-
ռակցությունը: Իլիկոն տեղից վեր եր կենում, իողու
մարդկանց համար՝ խաչ ու ողի տալու:

Այդտեղից սկսվում եր «Յեթիմ Գյուրջի» տրախտիրի
առորյան:

թորը բարեեց . Նրա գլխի թեթև շարժումից դուք չժնաց ու կամաց փսխաց իլիկոյի ականջին .

— Եսոր ելի թթված ա' , բա'ս , դիմանում չի : Ի՞նչ : Բա'ս , դուքանը լիկվիդացիա յա անում : Ամեն որ դուքանը կողպելիս ասում ա . «Եսոր ելի մթնեց» . չունքի քիչ ա առուտուր անում : Մի որ ել չհամբերեցի ու ասի . «Հը' , դարդդ ի՞նչ ա , առուտուր չունես , թե նալոզդ կարում չես տալ» : Չե' , ասում ա , միթամ' Դարչո ջան , կյանքից մի որ ել կորավ» :

Վասիլը նստեց տրախտիրի ամենախորը սեղան-ներից մեկի առջև . նախ՝ լավ թիքեց ջոկել տալու ու հետո մարդ չտեսնի , թե քանի «ալորցիա» յի ուսում :

— Տնածակները թիքա յեն համբարում , — ասում եր ինքն իրեն :

Ներսից գնացին , դրսից յեկան ուրիշները : Յեկան՝ կոչկակար Սպիրիդոնը , դերձակ Աբրահամ Բալաթյանը , «ձեռքի» առեւտուր անող Մաքարեն , տրեխ կարող ուստա Ռւնանը :

Իլիկոն շուալ պտտվեց յերկար սեղանների առջե : Ջրի ծորակի մոտ կավե պնակները լվացող տղայի ճա-կատից քրտինքի մի յերիդ եր կախվել :

Ռւնանը ձեռքը տարավ շալվարի դրպանը . յեթե մի քանի սիստուկ փող հաներ , կնստեր յերկար սեղան-ներից մեկի առջե , իսկ յեթե բախտը , այսինքն փողը սև դուրս գար , կթքեր հատակին և ողի կուզեր իլիկո-յից : Այն որը բախտը սև եր :

— Սրա գործերն ել վատ են : Սոված մեռնում ա , ասում ա' , «Հմի փեշակում ու դուքնում իսեր չի մնա-ցել , — ասում ա' . — չարչություն կանեմ , ինչ ա ազատ-վեմ յես ես նալոլզներից» : Բա'ս : Աի՞-հի՞-հը' ածիծա-ղեց Դարչոն , — միթամ' միշաբ արշաքար ա ու հլա դուքան ել

ունի , պարծենում ա : Աի՞-հի՞-հը' . . . յետ իմ մի հալի-
քն վոր ծախեմ , իրան ել , դուքանն ել հետը կառնեմ .
բա'ս , ամեն մի հալիմս , վոր իրեն տու արծաթ տան՝
չեմ տա , քո արևը , բա'ս :

— Վա'հ , — իմերելն աչքերը լայնացրեց զարմանքից :

— Բա'ս , հմի ո՞ւր ե ետ թավուր ապրանք , զադու-
նիցից եմ բերել ամել՝ ասորի ինձ համար :

Դերձակ Աբրամն ու Մաքարեն միշտ իրար հետ ելին
լինում , կարծես քորոցով կոլցրած ելին մե'կ-մեկու :
Նրանք ո՛ւմ տեսնելին , պիտի նրա կարողության , բնա-
վորության մասին խոսելին ու հետո վիճելին :

— Հլա մի մտիկ , պարիկմախերը վո՞նց ա լեզվին
տալի , — ասաց Մաքարեն ու սեղանի տակը յերկու
տարբեր կոչկի իրար զարնվեցին :

— Իլիկո՞ :

— Իս սահաթիսո , բատօնո՞ :

Իմիրելը հեռացավ , իր յետնից տանելով պարիկմա-
խեր Դարչոյի ապուշ ու բութ աչքերի հայացքը :

Ամեն որ , յերբ Ռւնանը մտնում եր տրախտիր , յեթե
վասիլը վերջացրած չեր լինում իր առջեկի պնակի միջի
խաշը , կլոր մեջքը շրջում եր նրան : Իսկ յեթե վեր-
ջացրած եր լինում , մատներով շիռում եր բեղերը , հա-
ցի վշրանքները մաքրելով :

Այն որը :

— Ուստա Ռւնան , եսոր ընչե՞ ուշացար , քիչ ելա
վաղ չես գալիս , վոր մի-մի արազով թաթախվենք :

— Սաղ ըլի քո ջանը , վնաս չունի . եսոր քեփս խա-
րաբ ա , մի ուրիշ որ թող մնա , — ասաց ուստա Ռւնանը :

— Վա'հ , Ռւնան , քո հերն իմ հորը շատ ա լավու-
թյուն արել , դանա յես պտիմ մոռանա : Իլո' , չիմ ձմիս

թվին կայ խաշի դասամ , — հետն ել նրան աչքերով ա-
րեց , վորը նշանակում եր՝ «հենց ենպե՞ս առի , չսխալ-
վե՞ս» :

Ունանը համառեց , հետո ուզեց հիշել , թե իր հերը
յէ՞րբ ե նրա հորը լավություն արել : Զհիշեց : Իսկ Վա-
սիլը մտածեց . «ուստա Ունանից մազ պոկելը՝ հեշտ ա» :

— Վասիլ , եսոր չաբաթ ա , գնանք մադաղինս բաց
տնեմ , մի իրեսդ թրաշեմ :

— Վասիլը գանա մի՞ իրես ունի , երկուսն ա , — ա-
ռաջ ուստա Ունանը :

«Լավ ուստացրի հա՞» , — մտածեց նա :

Վարսավիրան կեղծ ծիծաղեց : Ծիծաղեցին և մյուս-
ները :

Վասիլը վիրավորվածի պես յեղավ : Իսկ դերձակն
ու Մաքաբեն իրար հետ վիճում եյին ինչ վոր բանի
ժամին :

Վասիլը պատմեց , թե ինչպես մի անդամ հինգ ըն-
կերով ուզեցել են կառք նստել , սակայն բծախնդիր կա-
ռապանը յերկար սակարկելուց հետո հարցը ել ։ «թե
փեշաքավոր եք , կտանեմ , թե չե՞ չե» :

Վասիլը ժայռաց աչքերով , հետո նրանցից յուրա-
քանչյուրը գնաց իր խանութը բանալու , յերբ մյուս-
ներն արդեն բացվում եյին իրար հետևից :

Ամեն որ ամենավերջին հաճախորդը լինում եր ան-
տամներով վոսկերիչ Սեղրակը : Նա միշտ խաղաղ ու
լուռ եր լինում : Նա ուշ եր գալիս միայն այն պատճա-
ռով , վոր արախտիրում մարդ չլինի : Յերբ յերկու ըն-
կեր վիճում եյին իրար հետ ; Սեղրակը հեռանում եր
նրանց շառից :

Յերբ դատարկվում եր տրախտիրը , իմերելլը նըս-
տում եր մի սեղանի առջեն , նրա վրա դնում եր գլուխը
և մտածում այն մասին , թե իրեն ի՞նչքան ե փող հար-
կավոր , վոր տրախտիրը մեծացնի , դարձնի միկիտան ,
դեռ մի «արդան» բերի , հետո ել «դհոլ ու զուռնա» :

Նա մտածում եր ու մտքերի հետ քնում :

Տրախտիրի սկ պատերի մեկի վրայից Շոթա
Խուսթավելու յուղու նկարը , փետուրե գրիչը մափա-
խի ծայրը խրած , փոշու միջից ժապացող զեմքով նա-
շում եր սեղանի ափին քնած իմերելին :

Տ Ո Ւ Բ Ք Ը

Այն որը կարծես մի մեծ թիթեղ ընկավ շուկայի
խանութների վրա ու զբնօաց ուժեղ : Կարծես փոքրիկ
խանութներն որորվեցին :

Հետո հենվեցին իրար կողի՝ շթափելու համար :
Ու այդաես թեք ել մնացին : Շուկան խառնվեց իրար ,
փոքրիկ խանութները դժգոհեցին ու մութ խոռոչների
պես տխուր նայեցին այն մեծ խանութի լայն դռներին ,
վիտրինաներին ու անթիվ հաճախորդներին :

Դա Վասիլ Մառանջովի խանութի դիմացի նոր
կոսպերատիվն եր :

Մյուս որը Վասիլը գլուխը սովորականից յետ թե-
քեց , ձեռքի փոքրիկ թուղթն ավելի հեռու բռնեց և վոչ-
վոք չիմացավ՝ վախից արեց , զարմանքից , թե կարդա-
լու համար : Թղթի վրայի տառերն ու թվերն ասեղների
պես ծակեցին Վասիլը աչքերի բիբերը : Նրանք աստի-
ճանաբար մեծացան-մեծացան ու հետո՝ կարծես կազմ :

վեցին բողոքը և սպառնացան Վասիլին .—Նալոդ : Նրա
ուղեղի անդույն կտավի վրա մի վայրկյանում հազար
մտքը անցան, թվերը խառնվեցին իրար . թվաց, թե
խանութի պատերը փլվեցին ուսերին : Նրա աչքերում
իրար խառնվեցին՝ փոքրիկ խանութները, մարդիկ,
մայթերը : Դիմացից անցնող գյուղացու փափախը քա-
ռապատկվեց, մեծացավ, Հետո միտքրացավ : Խոկ այդ բո-
լորի միջից պարզ ու վորոշ հակա անիվների պես մուե-
նում և մեծանում եր դիմացի խանութը : Թվաց, թե
անիվները յեկան ու ծանր, շատ ծանր կանգնեցին խա-
նութի և իր ուսերի վրա : Ու նրա ձեռքի զղածիդ մատ-
ները ողի մեջ կարկառվելով իջան և քովեցին հողին :

Վասիլին զբաց, վոր վազն իրեն խանութի դռնից,
մյուսների պես, մի մեծ կողպեք պիտի կախվի, առա-
վոտից մինչև գիշեր, գիշերից մինչև առավոտ : Վասիլի
թավ հոնքերը զարսեց իրար վրա, դեմքը դժողոհեց ու
մտքում հայհոյեց ինչ վոր մեկին :

Խոկ Ռւնանը, նույն որը, թուղթը մոտեցրեց մինչև
քիթը և նրանով տողեր գծեց :

Ռւնանը խանութի շեմքում ձեռքերը կրծքին խա-
չած, անորոշ հայրացով նայեց գյուղացոց վոտքերին .
նա նրանց ծակ տրեխներում իր փրկության վոսկե գան-
ձը կորցրեց : Գյուղացոց տրեխները տրորեցին փողոցի
փոշոտ մայթերի վրա ընկած՝ Ռւնանի փշոված սիրտը :

Հետո հարևանները հուսահատ քայլերով մոտեցան
մայթյանց խանութին, տիսուր աչքերով նայեցին իրար ու
իրենց վեշտը հայտնեցին մե՛կ-մեկու՛ :

Այն որը վարսավիրա Դարչոն հաճախորդներ չու-
ներ, ուստի շրջում եր խանութներն ու նոր լուրեր հա-
վաքում :

Հեկ յերեկոյան խանութները փակելիս Դարչոն-

տեսավ նրանց՝ թե ինչպես յերկուսը իրար հետ տուրքի
մասին դվարակակ խոսելով գնացին իրենց թաղի կողմը :

Հետեյալ որը, վաղ առավոտյան, սովորականի պես
Դարչոն գնաց «Յեթիմ Գյուրջի» տրախտիրն ու իմերե-
լին հայտնեց .

— Իմացել ե՞ս, Վասիլին ու Ռւնանը նալողներին
դիմանում չեն, գուշանները կրղպում են, իրենց թա-
ղում հնդերովի յեն բաց անում—պուճուրը :

Իլիկոն չզարմացավ, վորովհետեւ նախ՝ նման մի
դեպքն այդ խանութների թաղում սովորական դարձած
յերեվույթ եր, խոկ յերկրորդ՝ ժամանակ չունեցավ
զարմանալու, վորովհետեւ հաճախորդները սպասում
եյին իրեն :

— Ե՛, կացո՛, մի որ ել միր գլխին ա գտլու, —ասաց
նա Դարչոյին ու շտապ հեռացավ :

Իլիկոն ցավեց՝ վոչ նրանց համար, այլ իրեն՝ վոր
գլխավորն եր, իրենից յերկու մոտիկ «մուշտարի» պակ-
սեց :

Յերբ հաճախորդները գնացին, Իլիկոն նորից
հարցրեց Դարչոյին .

— Կացո՛, բաս չի՞ս իմանում եսո ինչի յինդիր
դարձին :

— Վա՛, տեսիյա, կացո՛, կացո՛, —դիմ խոմ ետ
գիտես, —Դարչոն կատակով տնագեց Իլիկոյին : —Վոնց
չեմ իմանում, Վասիլի խասյաթը գու իս գի՞տաս . Ռւ-
նանի գլխին մի ոյին կրերի, բա՛ս :

— Հա՛, մա՛, գրուստիս ասում :

Վարսավիրան գնաց, բացեց իր «մաղաղինը», մաք-
րեց հայելու փոշի, հատակին ջուր ցանեց, հետո պարա-
պությունից չճանձրանալու համար՝ թառ նվազեց .

նայեց նրա պապսղում սաղափներին, բայց մտածում շարունակ մտածեց.

— Ա՞յսը, Վասիլին ու Ունանը վլո՞նց են յուլա գնալու:

Այո, այդպես եր մտածում, Վասիլ Մառանջովի տերմինով ասած՝ «տուտուց պարիկմախերը»: Սակայն Վասիլն ինչքան ել «տուտուց» անվաներ նրան, բայց և այնպես, «պերվոկասնի», «Բայց» «պարիկմախերըսկու» տեր Դարչոն, «Յեթիմ Գյուրջու» տըրախտիքիկ, ամեն ինչով հետաքրքրվող և ամեն յերեւութիւն շերենիով չափող իմերել իլիկոյի համար շատ հետաքրքիր մարդ եր, վորովհետեւ նրան ամեն որ նոր լուրեր եր հաղորդում:

“БЕДНЫЙ ЛАВОЧКА”

Թաղն արտասովոր տեսքի մեջ եր:

Նրանց փոքրիկ խանութն իր մանր և բազմազան իրերով «ասիական կրավակի» նմուշ եր կենտրոնական այդ մեծ քաղաքի փոքրիկ թաղում:

Սի անուշ թթնի իր գլխիկոր կատարն եր հանել թաղի դորշ կտուրների արանքից ու թեքվել նրանց խանութիւնից:

Անդործ մարդկանց խսուելու հետաքրքիր զեւք եր դարձել Վասիլի և Ունանի «մաղաղինը», ինչպես ասում եր նույն թաղի բնակիչ հոգկակար Սպիրիդոնը: Նրա խանութը Վասիլի և Ունանի «մաղաղինը» փողոցի անկյունում եր գտնվում: Նրա փոքրիկ-փոքրիկ խանութը մի մեծ ցուցանակ ուներ — «Հոգկակարի արևեստանոց»: «Ծիկ». «Սպիրիդոն Յաղջան»:

Բայց ավելի յեր զարմացրել կոչկակարին ու մի քանի ուրիշներին նրանց անշուք խանութիւն պատկառելի ցուցանակը. ո՞վ կարող եր յերեակայել. Վասիլին

իրա ձեռքով եր պրել թիթեղի գառակուսի կարի կանաչ փոնի վրա սպիտակ տառերով „Եճնի լավոչկա“ „Բ. Маранджօս“ և „Յ. Մեհմանյան“.

Առաջին որիշա առաջին հաճախորդը Սպիրիդոնը յեղավ, վորը դեռ խանութ չմտած՝ հարցրեց.

— Եղ ժեշտի կտորն ընչացու յի:

Վասիլը հասկացավ նրան ու իրը թե ըսեց. իսկ Ունանը շատ զարմացավ, թե ի՞նչպես հարկան կոչկակարը գաղափար չունի ցուցանակի մասին: Ունանը պարծեցավ, վոր ինքն անհամեմատ ավելի շատ բան գիտե, աշխարհ ու կյանք տեսած մարդ և, քան թե Սպիրիդոնը և մոտավոր կերպով բացատրեց ցուցանակի նշանակությունը:

— Յես իտիկ դիտեմ, հարցնեմ կը անուն ի՞նչ ե:

— Վիվիսկա:

— Եղա՞վ:

— Յա, վի վիս կա:

Սպիրիդոնն Ունանին ցույց տալու համար, թե ինքը նրանից լավ գիտե, բացատրեց, վոր «վիվիսկա» բառը հայկական ծագում ունի, բայց ընդունված ձեռվ կրծառված և, այսինքն նշանակում ե. «վե՞զ իստեղ կա»: Սպիրիդոնն Ունանին հավատացրեց, վոր այդպես և սոլորել հայոց լեզվի ոռւսախոս ակնոցավոր վարժապետից, յերբ գեռ ինքը գավառական փոքրիկ քաղաքի ծխական դպրոցի աշակերտ եր:

Ունանը հավատաց թե վոչ, Սպիրիդոնը չհասկացավ: Սակայն նկատեց, վոր Վասիլը շըթունքի ծերով ժպտաց: Սպիրիդոնը քիչ լոեց, հետո հարցրեց Վասիլին.

— Վիլիսկի վրա ը՞նչի յես գրել «լուվը չկա» . իտիկ գիտես ի՞նչ ըսել ե , յանի՝ «լավլը չկա» : Ե՞ , ել ը՞նչի նեղենաս կը , չես հավատա , հարցու Ունանին :

Իսկ Ունանը մտածում եր — ինչո՞ւ , ինչո՞ւ յե ընկերն իր աղքանունը ցուցանակի վրա գրել ամելի մանր տառերով : Թեպետ այդ մեկն այնքան աննշան համարեց նա , վոր իր դժգոհությունը չհայտնեց Վասիլին : Այդ մասին նա ասաց միայն կոչկակարին :

Սպիրիդոնը փոքրիկ իրանը յետ թեքած , ժամանույցի հաստ շղթան ծախ կրծքից կախած , խոսում եր բարձր ու բարակ ձայնով , խանութի մեջտեղում հոլլ պես ֆոռալով :

Շատախոս կոչկակարի հետ Ունանը ծանոթ եր վաղուց , իսկ ինքը շատ խոսել չեր սիրում :

— Եկել ես , մի բան ա՛ռ , խերդ ու փողիդ ռանդը տենանք , սիփթեն դուն ես . դատարկ դուրս տալդ ի՞նչներիս ա պետք :

— Վա՛հ , տնաշեններ , , տեսնիք կը հլը չնորհավոր կը , մեմ կեցեք , տեսնիմ ի՞նչ ունիք : Մադարիչը ձեր վրեն ե : Վասիլ , թե բան դուրս դա , ելի քեզնեն , որթաղդ հորթի կաշի յե , — կատակի ձևով ասաց նա , ժպտալով Ունանի կողմը : Ունանը թթված յերեսը շրջեց , կշեռքի նժարների վրայի փոշին մաքրելով : Վասիլը , հարկան կոչկակարին հյուրասիրելու համար , դախլի տակից ողու շիշը հանեց , լցրեց առաջին ոյումկան , մեկնեց Սպիրիդոնին , նա յել ճկույթ մատի ծայրով թեթև խիեց նրա բութից քիչ վերեւ .

— Սաղ եղնիք , առուտուր ու փող շատ ունենաք , գարդ ու նալոգ քիչ :

Սպիրիդոնն աչքերը խուփ , ձեռքը յերկարեց մի

մեծ պանրի կտորի , Վասիլի աչքերի հարցական հայացքը ձեռքի պանրի հետ բարձրացավ մինչև նրա մոզկող ըրթերը :

— Սպասիր , Վասիլն իրա բանը լավ ա իմանում . ես դիմու քթիցդ ու պնչիցդ կհանեմ , — մտքում խոսեց ինքն իրեն հետ :

Հետո լցրեց մյուսը՝ իրեն , յերբորդը՝ իրեն , նայեց ողու շին , խցանը սեղմեց , տարավ դրեց այնուեղ , վորտեղից վերցրել եր :

Ունանը զարմացավ , իբր թե չնկատեց , իբր թե զբաղված եր խանութի իրերը կարգի բերելով . բայց առաջին որը հենց նրա մեջ խոսեց ատելու նման մի բան դեսլի իր ընկերը :

— Վախեցավ խմեյի , վախեցավ պակսի : Են վիվսկեն մեկ , եղ ել երկու հլաւ — այնուհետև Ունանը նման բաներ այնքան հաշվեց մատներով , վոր յերբ յերկու ձեռքինն ել լրացան՝ հաշվը կորցրեց :

Եերբ Վասիլն ողու շիշը պահեց , Սպիրիդոնը չարցրեց .

— Ուստա Ունան , փեշակիդ վերջ տվիր , հլը ըսենը լավ , հասկնամ կը , հըսը ես որ չես խմե , շատ կզարմանամ :

— Զարմացիր , զարմացիր , Սպիրիդոն , քեզ ո՞վ տրան ասում , համա յես ել վոր շատ եմ զարմանում մեր Վասիլի արարմունքի վրա , դրանում ի՞նչ կասես :

— Փի՞ :

— Հը՞մ :

— Վա՛յ , Ունան ջան , իմ արելը , քո արելը , Մարուշիս , Վավիկիս արելը վկա , վոր սրտումս փիս բան չկա : Ես մի «ապոլը» դոխտուրն ասեց , առել եմ ռեմա-

արդմիս համար։ Գանա բուենց բանեք ել ես ժառանքում,
վեկալ, կուզես ոչիփ խմիլ։

— Լա՛վ, լավ, ջանըմ, իտոր եղածն ի՞նչ ե որ, թար-
պը տվեք, որթաղ եք, յոլա դնացեք, առուտուրներդ
թող լավ եղնէ, ետ մեկը հեչ ե։ Մենակ իմ առածո ձեր
երկուսի տունը կպահե։

Կոշկակարն ասաց, վոր որական տասը ուուրլու
«պրովիդյա» յե իր խանութի փոքրիկ աշակերտի ձեռ-
քով ուղարկում տուն։

Ճի՞շտ եր բայց յեթե աշակերտն իմանար, պիտի
ամոթով ժպտար ուստի յերեսին։

— Վասիլ, կաշեմ որ չեքմեքդ Հնցել են, ջուխոմ
ենակես կարեմ, վոր վոտքերուդ վրա թափած եղնի։

— Հալա յոլա կտանեն, — նայեց սապոդներին։

— Ծը՛, թե վողի հմար մտածես կը՝ ամոթ ե,
քիչքիչ կուտաս, յա թե չե՛ մանդր-մունդը բան տա-
նիմ կը ու քվիթ կեղնինք։ Որթիդ որ մնա, քեղի չա-
րուխ կհազցնե։ խա՛, խա՛, խի՛, — Ժպտացող
աչքերից մեկը խփեց։

Վասիլը նորից նայեց վոտքերին ու ժտածեց։

Սպիրիդոնի աշակերտը յեկավ։

— Ուստա՛, մուշտարի յեկավ։

Սպիրիդոնն ընդհատեց չեքմոց խռսակցությունը։

— Ծո՛, լազիրակ, թիքանն ում թողիր։

Աշակերտն ուստի հին, մեծ ուսերով, կապույտ
ու կարկատած խալաթը հագին, մաշված վոտնաման-
ները վոտքերին, խոշոր քայլերով վաղեց մայթի վրա։

Սպիրիդոնը դնաց մինչեւ գուռը, նորից յետ դար-
ձավ։

— Կալբաստի կիլոն ի՞նչդ ե։

Ունանը պատասխանեց։

— Կարագի՞նը։

— Տա՛ր, Սպիրիդոն, տա՛ր, մեք առաջի ու թագա
մուշտարին ես, սիփթեղ տեսնանք։

— Հը՛մ։

— Համ եժան ա՛, համ թաղա՛, համ լավը։

— Դիտեմ պանրի կիլոն քա՞նիս ե։

Գինը լսեց։

— Հը՛մ, ասմուշկեմ կշռես, աշենք։ Յա՛, թուղթ
խոժ չեմ առնի, տակը բարակ դի։

Պանիրը վերցրեց։

— Քովս խուրդա չունիմ, աշկերտի ձեռքով մե
քիշմ յետև ողկեմ կը։ Յա՛, կուզես, իտաեղ գրե չեք-
մոց հաշվին։

Գնալիս զարմացած նայեց խանութի չեմքին։

— Վա՞յ... կը... կը... կը... կը... կը... կը...

Վասիլն ու Ունանը փողոց յելան, կարծելով թե
մեկը հարվածեց կոշկակարին։

— Ա՛յ մարդիկ, դուք խամ խո չե՞ք, հբր չիդե՞ք,
որ չեմքի վրա նալ պիտի մխեք։

— Քո առնը ծակվի, հ՛տ եր, — զարմացակ Ու-
նանը։

— Մոռացել ենք. ասա իմ՝ կը ա մնում, ես մինը
վոչինչ, դուն չեքմոց բանը չմոռանաս։

— Զե՛, չե՛, — ասելով հեռացավ Սպիրիդոնն ու
ճանապարհին մտածեց։

— Լավ կրեղիտ բացի, թահո՛ւ, մեռնի, չեքմեքը
ուր կուտամ, որ վերին աշխարհ երթլուս ճամբեն թա-
զա-թաղա հագնի։

Խանութ հասնելուն պիս հանկարծակի յեկավ,
յերբ «մուշտարին» դնաց, հայցոյեց մեկին։

— Ենքան դործ չունինք՝ ինչքան նալով։
Ու կոշկակարը սրտի մաղձը թափեց փոքրիկ աշակերտի վրա։

Ո Դ Ի

— Բարի լուս, ուստա կուպեց։
Ունանը բեղերի տակ ո՞ւմ հայհոյեց, Սպիրիդոնը
չլսեց։

— Հը՛, թայդ ո՞ւր ե՛: Ապրանքի թե՛ առուտուրի
յէ գնացել: Լավ նպատակ ե՛:

Սպիրիդոնը վրդովկեց։
— Մարդ եղքան ել ժլա՞տ եղնի. են որվա բախին
ի՞նչ եր որ, մեծ բանմ եր, վախեցալ խմելինք. պակ-
սեր՝ կառնելինք։

— Նավս ա, համա գրուստ խոսող ա, քեփս գա-
լիս ա։

Սպիրիդոնը պատմեց, վոր ինքը «լոթի տղամարդ
ե»։ չի սիրում եղպես «զիզիւ-պիզիւ բաներ»։ Հետո զա-
նազան անուններ թվեց, թե հարցրեք նրանց, վոր ին-
քը մասնակցել ու թամադա յե յեղել «այսինչ-այնինչ
նշանավոր քեֆերին»։ Ասաց, վոր «տասերկու Փայթո-
նով ե քեֆ արել»։ փողոցից անցնող մարդիկ նկատել
ու զարմացել են, թե ինչպես գլխարկը մի կառքում ե
զրել, չեքմեքը՝ մյուսում, յերբորդում արծաթի վոս-
կեցած գոտիկը, չորրորդում «Բաղդադի խաս մար-
մեն», մյուսում մի ուրիշ իր։ Իհարկե, այդ բոլորը
փոչ-վոք չեր տեսել։

Սխալմած չեյին այն ծանոթ մարդիկ, վորոնց թը-
վում և Վասիլն ու Ունանը, վոր այդ «սապոմնիկը»
«փթերով փչող ե»։ ինչպես ասում եր վերջինը։

— Յսոր քիչմ պախմելյա յեմ, երեկ քեփս Հնդկու-
տանի ծովեն կուզար։

Գրպանից հանեց ողու փոքրիկ չեց, փեսեց բախն,
իցանը դուրս թռավ։

— Կաշե՞ս, Ունա՞ն, ես կառավարությունն ել որս
կա, մե որմ իսոր պես... հըը...։

Ցույց տվեց ողու շիշը։

— Յես իսոր հողին կրծեմ, խիկ որա կա, իսկը
մեռոն ե: Վերցրու խմենք՝ գիտես ո՞ւմ կենացը, —
շրթերը մոտեցրեց Ունանի ականջին, շատ ցածր ձայ-
նով։ — Տրոցկու, ենիկ որա կար՝ մեր թարախն եր, —
հետո չլուխը բարձրացրեց, լոեց, նայեց շատ հեռուն։

Խմեցին, մի-մի բաժակ ել լցրեց։

— Ունա՞ն, Փայթոնն որա կա՛, Փայթոն ե, չորս
հատ թաքյառ ունի, ամեն մե թաքյառը ֆոռա կը, ա-
մեն մե ֆոռալը նպատակ ունի. ես ել խմենք՝ եդ
Փայթոնի թաքյառի ֆոռալու նպատակի կենացը։

Շատերը պատմում եյին, վոր կոշկակար Սպիրի-
դոնը մեծ վարպետ եր անեկտուների, նրա հետ վոչ-
վոք չեր կարող մրցել և մեծ համբավ եր վայելում քա-
ղաքի արհեստավորների շրջաններում ու ամեն մի սը-
րամիտ դարձվածք նրան եյին վերադրում։

Յերբ ողին վերջացավ, Սպիրիդոնը նորից աչքն
ընկած ուտելիքների կիլոյի գինը հարցրեց։

Ունանը պատասխանեց։

— Ախպեր, ձեզնեն հեջ առուտուր ենել չի եղնի,
հոգի խո չե՞ք ծախե. ելի քու խաթրիդ հմար ե, որս
ըուզամ խսեղ։

— Ախը հմի նալողը մարդ ա խեղդում. Հացը թան-
գացել ա, նավթը թանգ ա, շաքարը չի...։

— Ենքան գործ չունինք՝ ինչքան նալով։
Ու կոշկակարը սրտի մաղձը թափեց փոքրիկ աշակերտի վրա։

Ո Ղ Ի

— Բարի լուս, ուստա կուպեց։
Ունանը բեղերի տակ ո՞ւմ հայհոյեց, Սպիրիդոնը
չլսեց։

— Հը՛, թալու ո՞ւր ե՛ : Ապրանքի թե՛ առուտուրի
յի գնացել : Լավ նպատակ ե՛ :

Սպիրիդոնը վրդովվեց։
— Մարդ եղքան ել ժլա՞տ եղնի . են որվա բախին
ի՞նչ եր որ, մեծ բանմ եր, վախեցավ խմելինք. պակ-
սեր՝ կառնելինք։

— Նավս ա, համա դրուստ խոսող ա, քեփս գա-
լիս ա։

Սպիրիդոնը պատմեց, վոր ինքը «Լոթի տղամարդ
ե» . չի սիրում եղակես «զիզիլ-պիզիլ բաներ» : Հետո զա-
նազան անուններ թվեց, թե հարցրեք նրանց, վոր ին-
քը մասնակցել ու թամադա յե յեղել «այսինչ-այնինչ
նախավոր քեֆերին» : Ասաց, վոր «տասերկու Փայթո-
նով ե քեփ արել» . փողոցից անցնող մարդիկ նկատել
ու զարմացել են, թե ինչպես գլխարկը մի կառքում և
զրել, չեքմեքը՝ մյուսում, յերբորդում արծաթե վոս-
կեջրած գոտիկը, չորրորդում «Բաղդադի խաս մար-
ւեն», մյուսում մի ուրիշ իր : Իհարկե, այդ բոլորը
վոչ-վոք չեր տեսել :

Սխալված չեյին այն ծանոթ մարդիկ, վորոնց թւ-
ում և Վասիլն ու Ունանը, վոր այդ «սապոժնիկը»
«փթերով փչող ե», ինչպես ասում եր վերջինը։

— Եսոր քիչմ պախմելյա յեմ, երեկ քեփս Հնդըս-
տանի ծովեն կուգար։

Դրպանից հանեց ողու փոքրիկ շիշը, փիեց բոխն,
խցանը դուրս թռավ։

— Կաշե՞ս, Ունա՞ն, ես կառավարովումն ել որա
կա, մե որմ իսոր պես . . . Հը՛ . . .

Ցույց տվեց ողու շիշը։

— Յես իսոր հոգին կրծեմ, իսիկ որա կա, իսկը
մեռոն ե : Վերցրու խմենք գիտես ո՞ւմ կենացը, —
շրթերը մոտեցրեց Ունանի ականջին, շատ ցածր ձայ-
նով — Տրոցկո՛ւ, ենիկ որա կար՝ մեր թարափն եր, —
հետո չլուխիը բարձրացրեց, լոեց, նայեց շատ հեռուն։
Խմեցին, մի-մի բաժակ ել լցրեց։

— Ունա՞ն, Փայթոնն որա կա՛, Փայթոն ե, չորս
հատ թաքյառ ունի, ամեն մե թաքյառը Փոռա կը, ա-
մեն մե Փոռալը նպատակ ունի . ես ել խմենք՝ եդ
Փայթոնի թաքյառի Փոռալու նպատակի կենացը։

Շատերը պատմում եյին, վոր կոշկակար Սպիրի-
դոնը մեծ վարպետ եր անեկդոտների, նրա հետ վոչ-
վոք չեր կարող մրցել և մեծ համբավ եր վայելում քա-
շաքի արհեստավորների ըրջաններում ու ամեն մի ու-
րամիտ դարձվածք նրան եյին վերադրում։

Յերբ ողին վերջացավ, Սպիրիդոնը նորից աչքն
ընկած ուտելիքների կիլոյի դինը հարցրեց։

Ունանը պատասխանեց։

— Ախարեր, ձեզնեն հեջ առուտուր ենել չի եղնի,
հոգի ինո չե՞ք ծախե . ելի քու խաթրիդ հմար ե, որո
քուքամ իստեղ։

— Ախր հմի նալողը մարդ ա խեղդում . Հացը թան-
գացել ա, նավթը թանգ ա, շաքարը չի . . .

— Յա , լնշի՞ , յես չիդե՞ք . զսրթ ե , խատակեր չեմ ,
հայտակեր եմ . խոսքը կըսե՝ ցորեն հաց չեմ կերե , և ը
ոմբարը իոռ պառկել եմ : Հմը ձեզնե՞ն հե՞ք ...

— Նալոդը հրես գալու ...

— Յավա՛շ :

— Մերնի ոեժիմի վախտը ըսենց ե՞ր ... Հեյ գեղի
հա՛ , ի՞նչ ժամանակ կորավ :

— Յավա՛շ , կըսեմ :

Սպիրիդոնը ձեռքը տարավ ծոցի գրպանը , հանեց
մի յերկար թերթ ու կարդաց , վորի վրա գրված ելին
կարեոր և յերկորդական իրերի գները՝ համեմատած
առաջ ու հիմա :

Իմերել , վո՞րտեղ եյիր , ականջդ լսեր :

Սպիրիդոնն սկսեց վիճել : Ամեն տեղ նա իր դըր-
պանից ոգնության եր կանչում այն ցուցակին , վորի
թվերը վորտեղից եր հավաքել , սատանան դիտեր
միայն :

Նորից մի ասմուշկա պանիր ուզեց :

Ունանը կըսեց զգուշությամբ , փաթաթեց «զոգե-
թի» թղթի մեջ , նորից կըսեց :

— Թող հալալ ըլի :

Նորից վերցրեց , նորից կըսեց :

— Ծը՛ , լավ , ուստա Ունան , վնաս չունի , թող մե-
րանմ ել թեթև եղնի . խոր եղածն ի՞նչ ե որ , ամոթ է :

Վերցրեց , մեջքը շրջեց Ունանին :

Նրա ձեռքը պանիրը տալուց հետո ովում յերկա-
րած մնաց : Յերկարած ձեռքը գիտեր , վոր մատներն
ինչ վոր բան են շփելու , բայց բանի վոր չչփեցին , Ու-
նանն ամոթով հարցրեց .

— Ուստա Սպիրիդոն , բա փո՞ք :

Սպիրիդոնի քայլերը կիսառ մնացին :

— Գրե Վասիլի չեքմոց հաշվին :

— Վոնց կըլի , դուքանը թաղա յենք բաց արել , նիս-
յն նալոդի պես մարդու մեջք ա կոտրում : Վասիլին առ-
սեց նիսյա շտաս , չեմ իմանում , նա գիդա՛ ...

— Դե՛ , յես ել ինոր հետ եմ գործ բռնել , քեզի
հետ բան չունիմ , ախպեր ջան ; ինքը լավ գիտե :

— Ի՞նչ գործ :

— Զեքմեք կարեմ կը :

— Իմ ի՞նչ բանն ա :

Նա նայեց Ունանի կոշիկներին :

— Քեզի հմար ել կկարեմ :

Սպիրիդոնը գնաց :

Ունանն մտքում վորոշում եր խանութից Սպիրի-
դոնին «ապրանք» ել բաց չթողնել : Սակայն Սպիրիդո-
նը ձեւ գիտեր , ամեն գալու ծոցի գրպանից անձա-
տումսի պես հանում եր ողու շիշն ու մի քիչ հյուրասի-
րում Ունանին :

Ունանն ամեն որ Սպիրիդոնի տարած պանրի հաշի-
վը չկորցնելու . համար , գանակի ծայրով մի խաղ եր
քաշում դռան վրա : Խազերն ինչքան շատացան , այն-
քան Ունանի կրոնկները բարձրացան գետնից : Արևին
ինչքան անցան ու խազի հետքեր թողին դռան վրա :

— Ես ի՞նչ ցավ ե . երկու քարի արեն ընկա :
Վո՞ք անեմ , Վասիլ չիմանա :

Կիրիլլ , Ունանի ԴԱՆԱԿԸ ՑԵՎ ՍՊԻՐԻԴՈՆԻ ՑԵՐԳԸ

Վասիլը շնիտեր , վոր կոշկակար Սպիրիդոնն իրեն
չաժար չչեքմեք և կարում : Ամեն որ նա Ունանի հեռ
բաց եր ահաւմ « Եօնակա լաւուկ » խանութի գիւղկե-

ըք, մնում եր մի քիչ ու գնում շուկա՝ իր «ձեռքի առևտուրն» անելու։ Յերբ վասիլը գնում եր շուկա, գտմա եր նրա կինը— Մարուշը։ Կոչկակարն ասում եր, վոր դա անվտահության նշան է։

Մի որ, յերբ Մարուշը յեկավ, Սպիրիդոնն շատ դարս յելավ խանութից։

— Ի՞նչ եր ուզում, — կասկածուա հարցրեց Մարուշը և վորովհետև կոված եր նրա կնոջ հետ, այդ պատճառով չեր հարգում և Սպիրիդոնին։ Իսկ այդ բոլորը Սպիրիդոնը գիտեր։

Ունանին թվաց թե՝ Մարուշն ամեն ինչ տեսավ ու հասկացավ։ Նա ամոթի պես բան գետց, ուզեց վոր բովեներն արագ-արագ անցնեն։

Հանկարծ ինքն ել չիմացավ՝ թե ինչու։

— Վոչինչ. նիսյա տարավ։

— Քա վո՞նց, ը՞նչի տվիր։

— Վասիլի հմար չեքմեք ա կարում։

— Վասիլի հմար չեքմեք ա կարո՞ւմ, բաս նա գե՞զա։

— Վոնց չե։

Մարուշն Ունանի ձեռքի դանակը տեսավ։

— Բա մուշտարու վրա դանակ ը՞նչի եյիր քա. շում, չի կոփվ ըլավ։

— Զե՛. ես հենց ընենց, նիսյեն եմ նշան անում։

Հետո խաղերը տեսավ։

— Յա՛, ես դիմի նիսյա՞ յա։

Ունանը վոչինչ շասաց։

— Վասիլն իմանո՞ւմ ա, վոր նա նիսյա յա տանօմ։

— Վասիլը։

Ունանը պլուխն որորեց։

— Բա ը՞նչի յես տալիս, իժում վո՞նց կըլի։ Ամեն մեկը վոր զա ու ասի, դու խո չովիտի բոլորով ապրանք բաց թողաս, քա՞ դուքանը կոտր խո չե՞ս գցելու։

Լոռություն։

Մարուշը նստեց դախլի հետեւը, իսկ Ունանը խանութի շեմքին ու պարապությունից չձանձրանալու համար արևածաղկի հունտը ճոճուացրեց շրթերին։

Մարուշը միշտ նայում եր խաղերին, ուզում եր հաշվել, բայց խառնվում եյին։

— Խալիսին նիսյա ապրանք ա բաց թողնում հերիք չի, ծանր ել կըուում ա ու հլա եսքան ել ուտում, մտածում եր Մարուշը։

Զհամբերեց։

— Ունան, ընենց ես ժաժ գալիս, վոնց վոր մենակ քո հոր դուքանն ըլի. կարգը ըտենց չի։

— Մարուշ, հերիք ա խոսես, համբերությունից դուրս եմ գալիս։ Եես դդակս քո առջև դնող ու վրայից թռչողը չեմ, լավ գիտենաս։

— Քա, սրան մի. ասածդդ ի՞նչ ա։

— Են ա, վոր դու քո տեղում կաց. ավել-պակաս մի խոսա. դեմդդ տղամարդ ա կանդնած։

Մարուշը յերազի նման հիշեց իր հին, շատ հին կոխվը Ունանի կնոջ հետ։

— Մի հլա մտիկ, կնիկարմատի հետ վոնց ա խոսում, կասենաս խարշենում ըլի. ը՞նչի, յես իմ տեղումը չե՞մ, ուզում եյիր, վոր քո կնկա պես լիբբ ըլեյի, սիրեկաններ պահեյի, հա՞։

— Լիբբը գուն ես։

— Քա՞ լիբբն ել ես ու գողն ել. մեկն ըլեր սրան տեսար, թե վոնց ա կնիկարմատին անպատմում։

Աւանը վոչինչ շասաց, միայն դողացող բեզերի
տակից թքեց ու ապա ջղայնորեն մատերը կծկեց:

Մի յերեխա յեկավ:

— Մարուշ տոտա, Վավիկին տղերքը ծեծել են,
քուչում լաց ա ըլում:

— Ո՞վ ծեծեց խեղճ երեխիս, իսկող, ձեռքդ կո-
ռըրվեր:

Մարուշը դուրս յեկավ դախվի հետեւից և պարկի
մեջ քիշմիշ, կանֆետ ու միրզ լցրեց — տանեմ տամ'
լացը կտրի: Մարուշը մի անգամ ել իր մանր կկոցվող
աչքերով նայեց Ռւնանին ու գնաց: Ռւնանը վորոշեց,
յերբ Վասիլը գա, ամեն ինչ, այո՛, ամեն ինչ վեր-
ջացնի:

Վասիլը յեկավ, Ռւնանը դեռ վոչինչ շասավ, հա-
կառակը, մի տեսակ կարծես մոռացավ:

Ռւնանը գնաց ճաշելու:

Նա տանն իրեն կնոջ պառկած տեսավ, մի թաց
կտոր ճակատին ու թմրած աչքերից մեկի տակը կապ-
տած: Հարեան կանայք դեռ հավաքված ելին նրա մահ-
ճակալի շուրջը:

Կինը պատմեց, վոր Մարուշը պատի վերևից կեղ-
տոտ ջուր և թափել իրենց դուռը. դրա համար ինըը
խոսել ե...

Ռւնանն ել չլսեց, լուս դուրս յեկավ ու դուռը նրա
հետեւից հիվանդ կնոջ պես ճռաց:

Մարուշը նորից խանութ յեկավ. լուս նոսեց դախ-
իք հետեւ:

Վասիլը տիուր եր:

Մարուշն հանկարծ լոցեց:

Վասիլը զարմացավ:

Ու Մարուշն ամեն ինչ պատմեց:

Ճույց տվեց դռան վրայի խաղերը: Հետո քիչ
ծայրի քերծվածը:

— Հրե՛ս, ես ել նրա բաց բերան կնիկը թամամեց:

Սակայն փոքրիկ հայելին տեսավ, վոր Մարուշն
ինչն իր քթի ծայրը քերծեց կատվի սուր մագիկի ծայ-
րով:

Վասիլը մինչև վերջ լուս լսեց ու վոչինչ շասաց,
միայն զարմացավ ...

Ռւնանը յեկավ, կանոնեց խանութի շեմքին:

— Մի հա ներս համեցիր, Ռւստա Ռւնան:

— Ի՞նչ կա, ասա, ըսենց ել լավ ա, — ու խեթ-
իեթ նայեց Մարուշին:

— Ես ընչեր եմ իմանում:

— Խալիս թող ասի:

— Վ՞նց թե ...

Յերկուսը վիճեցին յերկար:

Նրանց վեճն ավելի տաքացավ և յեթե Մարուշի
ձղրոտցի վրա հարեանները չհավաքվեցին միջամտե-
լու, Վասիլն Ռւնանի գլուխը ձմերուկի պես պիտի կի-
ռեր:

Այդպես եր ասում նա հավաքվածներին:

Այն յերեկո նրանը խանութից ուշ տուն գնացին:
Խանութի միայն փեղկերն ելին փակել, իսկ ներսում
բաժանվում ելին իրարից: Խանութում Վասիլից ու
Ռւնանից ջոկ ուրիշ ո՞վ կար՝ չիմացվեց, վորովհետեւ
փեղկերը փակված ելին:

Մարուշը գիշերիա տեսած յերազը կապում եր պա-

առած գեղքի հետ։ Յեվ այն զիշեր ել, վոր նա յերազ չեր տեսել, ինչ վոր բան եր հօրինում՝ կապելով այն խանութի դեղքի հետ։

Վասիլլ մահակալին մեջքի վրա պառկած, աշքերն անորոշ մի կետի՝ մտածում եր ինչ վոր բանի մտսին։

Մարուշն անվերջ խոսում եր։ Յեվ շատ խոսելուց՝ թմրել եր ու քննել։

Մարուշը խոսում եր ելի, բայց արդեն քնի մեջ։

Դուքանը կողպեցի՞ր . . . դախվցը փողերը վերցրի՞ր . . . կուխնու դուռը բաց մի թողա . . . շկաֆը պինդ ծածկիր, կատուն չմտնի . . . Ունան, ծանր ա, թեթև կշռիր . . . ավելը դռան հետեւց չտանեն . . . մարդիս չեքմեքը կարեցի՞ր . . . սեմիչկա քիչ կեր . . .

Մարուշ, համա ինչ ըրավ, իմ որառին ա. խոսքն առում ա թե՝ սոված գելից թեկուզ մի մաղ. ետ ել մեծ բան ա, լավ գիտենաս։ Յես հենց պրիչինա եյի ման դալիս։ Զե՛, լավ ըլավ։ Զերը դատարկ, աչքը կապի՝ ճամբու դրի։ Հմի ընենց եպոխա յա, վոր փող ըլած տեղը՝ տերտերի միրուքը ժամի միջին կթրաշես։

Եեր Վասիլն իր մի այտի վրա զգաց Մարուշի տաք չնչառությունը, հանկարծակի յեկավ։ Շրջվեց մյուս կողքին ու քննեց շատ խորը և հանդիսաւ։

Ունանը քայլում եր քաղաքի հետին ու քնած թաղի փողոցներից մեկով։ Քայլում եր. նրա վոտքերն որորվում եին, մտքերը տատանվում։ Ունանը Վասիլի վոխը ոչահեց սրտումն ու իր վրեժն ուղեց լուծել Ապիրիդոնից։

Լուսինը բարձրանում եր տանիքների ուսերից։ Մի

ասաղ ընկավ տանիքների հետեւ։ Հետո մի ստվեր շարժվեց փողոցի փոշոտ ու մաշված քարերի վրա։

Սպիրիդոնի ստվերն եր։

Յեվ Ունանը տեսավ, թե ինչպես Սպիրիդոնն արորվում եր մայթերի վրա, ուսը հենում պատերին, փաթաթվում ծաւերին։

Սպիրիդոնն Ունանին չեր տեսել ու յերգում եր.

Լուսին ջա՞ն, գեմքդ ընչի յես բացել,

Դուն ել ես հարբել, այ դու անամոթ.

Մարդկանցը խափիր, հեռացիր դուն ել,

Ամանչիր ընձնեն, վաղուցվան ծանոթ։

Սպիրիդոնը մտածում եր Ունանի մասին։ Ունանը կանգնեց, նայեց Սպիրիդոնի հետևից։ Ունանի բեռները գողացին, ատելու պես մի բան խոսեց. սիրությունը կրծքի տակ ու նորից նա լսեց.

Թող վոր ըսեն, թե ուրախ եմ ապրել,

Թող վոր ըսեն, թե շատ եմ չարչարվել,

Շատերին սիրել, շատերին ատել,

Բայց գինուց ըսավ չեմ հրաժարվել։

Ունանը գրպանները խառնեց, հետո նրա դանակի սրածայր լեզուն պապղաց լուսնի տակ։ Ունանն արագ քայլերով մոտեցավ Սպիրիդոնին, բայց նա դարրասից ներս մտավ։ Սպիրիդոնը փակեց դարրասն ու մտածեց Ունանի մասին։ Ունանը կանչնեց փակված դարրասի առջե. լսեց նրա հեռացող քայլերի ծայնն ու մեղմացող յերդը.

... Շատերին սիրել, շատերին ատել . . .

Հայաթի ներս մի դուռ ճռոաց, իսկ Ունանը փակված դարրասի առջե կանդնած մնաց։

ՄԵԽԱՎՈՐ ԹԹՈՆԻՆ

Հետևյալ որը, Վասիլը խանութի ցուցանակին Ռւնանի ազգանունի վրա կպցրեց ապիտակ ու մաքուք թղթի մի կտոր։

Ու ամեն որ, ամեն որվա պես առավոտ կանուխ, Վասիլը բայ եր անում խանութի փեղկերը, ջրում հատակն ու մայթը, մաքում փոշին ու իրերը կարգի բերում։ Հանում եր ողու «պոլու», «մի քիչ թաթախվում», ինչպես ինքն եր ասում։

Վասիլը շուկա ել չեր զնում՝ առեւրի. նստում եր դախլի հետեւը, ծույլ-ծույլ նայում մայթերի վրայով անցնող-դարձող մարդկանց քայլերին, կոշկեներին և կարծես մտքում դրազ եր բռնում. —այ, ես մեկն անցավ, համա են մյուսն անոլայման կդա։

Յեվ յեթե չեյլն գալիս, նա նորից հանում եր «նիս-յոց դավթարը» և նրա խամրած ու կարմիր գծերով յերեսների վրա մատիտի ծայրը կրծելով, ինչ վոր բան եր գրում. անհարթ թվերը կլորացնում, մեծացնում, հետո շատ զգուշ լուցկու ամեն մի տուփից գողանում եր չորսական ձողիկ, ծխախոտից մի-մի հատ, լցնում ուրիշ տուփերի մեջ ու մյուսների հետ դարսում թարեքում։ Դե՞, հետո՝ ո՞վ պիտի իմանար, վոր ասեղից, գնդասեղից մի հատ պակաս եր։ Իսկ կանաչու դաստանների կիսելն ավելի հաջող եր։ Զե՞ վոր Վասիլի ասելով-«խալիսը ղալբացել ե»։ Զե՞ վոր իրեն «ըստենց են տալիս, Վլասոտի սարքածն ա»։ Վասիլի ասելով, այդ «Վլասոտը» մինչեւ իսկ այրելու մոմը կիսում եր մեջտեղից։

Մարուշը թեյի փոքրիկ ամանները ձեռին և թաշկինակում հաց ու պանիր կապած, յերեխայի հետ դա-

34

լիս եր խանութ։ Նա յել նորից իրերը կարգի յեր բերում։

Ու ամեն որ, հենց վոր Մարուշը և յերեխան դամփս եյին խանութ, Վասիլը դնում եր կոչկակար Սպիրիտոնի մոտ «նիսյոց», ան չեքմոց հաշիվը մաքրելու։ Բայց նախքան դնալը Մարուշին ասում եր.

— Դուքնին լավ նայիր։

Մարուշը նստում եր դախլի հետեւ ու պարապ չմնալու համար, դուլպա յեր գործում թելի կլոր կծիկը գոգու դրած, բարակ, չոր մատներով մալլթուլի ձողերն արագ խաղացներով։ Հետո նա շուտ-շուտ քթի վրայի ակնոցի պոչերն ամրացնում եր ականջների հետեւը։

Մարուշն որվա մեծ մասը լինում եր դախլի հետեւ նստած. խանութի մի անկյունում թմբեցուցիչ ձայնով դռուում եր «պրիմուսը», վորի վրա յեփվում եր ճաշը, իսկ հետո՝ յերեկոյան թեյը։

Գալիս եր մի հաճախորդ ու ցանկացած իրն եր հարցնում։

— Վո՞ւյ, քա՞, վոնց չունենք, մենք ել վոր չունենանք, բա ել ո՞վ ա ունենալու, — նստած տեղը վիզը ծոած, մի ապակին ձեղքված ակնոցի վրայից նտյելով, ասում եր նա։

— Ի՞նչ արժե։

Պատասխանում եր։

— Ես վոնց ե, քո գներն ուրիշ ե, Վասիլին՝ ուրիշ, — գժգոհում եր գնորդը։

— Զե՞, քա՞, չարդ տանեմ, մեղ քառ ամիթեցի հանդի յա, գները հալալ են. հակառակ ել չեմ, եղերա ալել ուղեցի, կնիկարմատ եմ, յես հմի վո՞ր մինը միտու

35

պահեմ : Գինը ուսւն կդիդենաս , ասա , քեզանից խոժ
ավել չենք վեր ունի :

Վասիլը գնում եր կոշկակար Սպիրիդոնի մոտ ,
բայց նրա «Շիկ» խանութը փակ եր լինում : Նա կար-
ծում եր , թե Սպիրիդոնը հիվանդ կլինի , վորոշում եր
դնալ ու կանչնել հիվանդի գլխի վերև , հիշեցնել
ուստացի մասին , վոր կոշկակարը մեռնելիս «Հիսյեքը»
«Հանդերձյալ աշխարհ» չտանի : Բայց Վասիլն ինքն ել
չդիտեր , թե ինչո՞ւ հետաձգում եր միշտ :

Մի որ եկ Վասիլը շատ զարմացավ , յերբ տեսավ ,
վոր «Շիկ» խանութի շուցանակը չկա : Կարծեց , թե
կոշկակարն արդեն մեռել է , բայց շատ զարմացավ .
ի՞նչպես մեռավ նա , վոր վոչվոք չիմացավ :

Հարցրեց դունապան կուրքաթին , իմացավ , վոր
Սպիրիդոնը տուրքերին չղիմանալով , փակել և խա-
նութն ու աշխատում ե տանը :

Սպիրիդոնը հանկարծ ծովեց անկյունից : Նա մի
քանի խոչոր կապոց ուներ ձեռքին ու ուսին : Յերբ նա
Վասիլի հետ իրենց տան կողմն ողում պարզված կուր-
քաթի ձեռքը տեսավ , ամեն ինչ հասկացավ , արագ յետ
շբացեց :

Սպիրիդոնի ուսի բեռը նեղում եր ու մաղու քթի
ծայրից քրտինք եր կաթում փողոցի քարերի վրա ,
բայց նա գնում եր արագ , վախչող քայլերով :

Վասիլը չտեսավ Սպիրիդոնին ու գնաց նրանց
տուն :

Դուռը բացվեց , Վասիլն իր յուղու դեմքին զդաց
ներքնահարկի փոքրիկ ու քրտնած սենյակի ներսից փը-
չող խոնավ , տաք դոլորշու և ճենճի անախորժ հոտր ,

վորոնք իրեն հետ դուրս բերեց գունատ , դեղին աչքե-
րով և սապնոտ ձեռքերով Սպիրիդոնի կինը :

Վասիլը հիշեցրեց չեքմոց ու պարտքի մասին :
— Ետիկ իմ դործը չե , մարդս զիտե ասաւաց
կինը :

Սպիրիդոնը տանը կարած կոշիկները կիրակի որե-
րը տանում եր շուկա վաճառելու և հեռու գյուղերը՝
զանազան մթերքների հետ վոխանակելու :

— Հա՛ , վայ թե շատ ուշ դա , — ասաց կինը , յերբ
Վասիլը զայրացած հեռացավ հայաթից :

Յերբ արևի լիմոնագույն ճառագայթներն ընկնում
եյին խանութի շեմքին , Վասիլը նստում եր միողոցի
մայթի ափին :

Մարուշը յերեխայի ձեռքից բռնած գնում եր «Հա-
րեան կանանց հետ մասլահաթի» :

Թաղի փոքրիկ յերեխաները հավաքվում եյին Վա-
սիլի խանութի շուրջը , կամ չարացնում եյին նրան ,
կամ թե մեկը հեռվից հեմիհեղ դալիս եր ու վախեց-
նում .

— Վասիլ ձիյա , մի պորտֆելով մարդ ձեր տուն գը-
նաց , տոտեն կանչում ե :

— Վասիլ ձիյա , երեխեղ բալկոնից վեր ընկա լ . . .
— Հա՛ . . . յե՞րբ . . . հմի . . . զբուստ . . . ը՞նչի
հմար . . .

Թաղի յերեխաները , լավ , շատ լավ զիտեյին , թե
ի՞նչպես ե նա շփոթվում , յերբ լսում և պորտֆելի ա-
նունը և վորքա՞ն հոգատար ե զեպի իր փոքրիկ տղան :

Մի ուրիշ յերեխա խանութից միրգ եր «Քոցնում» .
մյուսները ծիծաղելով վազում եյին նրա հետևից և

պահվում եյին ծուռումուռ փողոցների տների դար-
բասներից մեկում։

Վասիլն զգում եր, վոր իրեն խաբեցին, հայհոյուժ
եր յերեխաններին ու քարեր շարտում նրանց հետևից։

— Տո՛, յես ձեր են... մեղա քեղ, մեղա, յես ձեր
տոլն ե՞մ, լածիրակնե՛ր։

Եերբ արեւ նեղ փողոցներից բարձրանում եր տը-
ների բարձր պատերին ու կտուրներին, Վասիլի խա-
նութիւն հաճախորդները շատանում եյին։

Թթենու ծայրից ու կտուրներից հեռանում եր ա-
րեւ, թանձր մթնչաղը փոփում եր թաղի տների ու փո-
ղոցների վրա։ Թթենին մոխրագույն զգեստ եր հաղ-
նում և խանութիւն իջած ավավում կամաց։ Կուղաթը
սանդուխն ուսին դրած, ստվերի նման որորվում եր
փողոցում։ Հետո Մարուշը վերադառնում եր հարեան
կանանց մոտից ու Վասիլը փակում եր խանութը, որ-
վա վաստակից դժողոհ և յերեխան առաջներն առած,
նրանք կողք-կողքէ քայլերով դնում եյին տուն։

Կուղաթն ուսի սանդուխը հենում եր պատին,
բարձրանում վեր, վասում փոքրիկ, սևացած ապակի-
ներով ֆանարը, և նրա կողքից լույսի մի աղոտ շերտ
ընկնում եր փոքրիկ ու կանաչ ցուցանակին, վորի վրա-
յի տառերը կարծես հողնածությունից խառնվել եյին
իրար ու թեք ընկել, հորանջում՝ այն հին թաղի, փոք-
րիկ խանութի վրա։

Ամեն յերեկո այդպես փակվում եր այն թաղի «Եղ-
անի լավուկ» մանրավաճառի խանութը, վորի առոր-
յան նույն եր ամեն որ, յեթե չհիշվեր վերջին մի
գեպը։

Թ Ս Յ Ը

Վասիլն ամեն մի վայրկյան, իր ամեն մի քայլա-
փոխումին նույն եր մտածում ու տեսնում աչքերի
առջեւ և մահասարսուռ յերկյուղ դդում։ Նա գիտեր
հաստատ, վոր գալու յե նա, սպառնալու իրեն և փոք-
րիկ խանութին։ Ու Վասիլն ամեն որ սպասում եր նրա
մոտենալուն։

Ցեվ նա Վասիլի սպասածի պես՝ յեկավ մի առա-
վոտ, յերբ ինքը թերթում եր նիսյոց գավթարը։

Եերեկոյան Մարուշը տուն շուտ գնաց, Վասիլը
խանութը փակեց։

Կուղաթը յեկավ, խանութի ֆանարը վառեց։
Վասիլը ձեռքերը մեջքին դարսած, կանդնել ու
սառած աչքերով նայում եր նրան։

Կուղաթը սանդուխը ուսեց, վոր գնա. Վասիլը,
ցուցածատը շրթերին դրած, նայեց նրա հետեւից։

Եերբ Կուղաթը պիտի ծովեր անկյունից, Վասի-
լը կանչեց։

— Կուղաթ։

Նա ըրջվեց մարմնով։

— Հինչա՞ , խաղե՞յ։

— Կուղաթ, ըստի արի, — վիզն առաջ թեքած,
մատի նշանով, մտերմական, բայց ցածր տոնով կան-
չեց Վասիլը։

— Եկաս եմ, խաղեյ։

— Քեզ հետ գործ ունեմ, հենց բանդ վերջացրու
ու տուն արի։

— Կքասեմ։

Վասիլն արագ շրջվեց։ Կուղաթը նայեց նրա հե-
տեւից։ Հետո յերկուսն ել քայլեցին փողոցի հակառակ

ուզդությամբ, մեջքերն իրար շրջած, մեկը սանդուխքն ուսած լույսերը վառելու, մյուսն իր գլխում արդեն վառած կայձի լույսի հուսով՝ դեպի տուն:

Վասիլն իրենց բակում յերկու հարևան ուներ. մեկը վոսկերիչ Սեղբակն եր, մյուսը «Միջի փողոցում» հայտնի դերձակ ամուրի Աբրահամը:

Վասիլը դերձակին կանչեց իրենց տուն, թեյով հյուրասիրելու: Վասիլը նրան հայտնեց իր նպատակի մասին: Դերձակը հավանություն տվեց և խռոսացավ աջակցել նրան: Դերձակն ասաց, վոր կընթի իր այրի քրոջը չորս յերեխաների հետ միասին, վորոնք ապրում են իր հովանավորության տակ: Գնալիս ել դերձակը շատ դժգոհեց նոր որենքներից ու կյանքից:

Քիչ հետո դուն սանդուխքների վրա կոպիտ վոտնաձայն լովեց: Դուռը կամաց ճոռաց ու կուղրաթը շեմքից ներս մտավ:

Նրանք նստեցին փոքրիկ սենյակի սպիտակ սփոռացով փոքրիկ սեղանի շուրջը, վորի ծայրին դեղին ինքնայեռը կարծես թե յերդում եր այնպէս խորն ու խուլ. նրա ձայնը կամաց-կամաց հեռանալով, մեղմանում եր, բայց միևնույն ժամանակ խղում չորս փոքրիկ պատերով սենյակի անդորրը:

Կուղրաթը նայում եր գեղին ինքնայեռին. հետո դիմացի պատից կախված մեծ հայելուն, վորի մեջ ի բեն թեք եր տեսնում ու շատ զարմանում:

Վասիլը կուղրաթի հետ խոսեց ուրիշուրիչ հարցերի շուրջը, հետո շեղվեց.

— Կուղրաթ, իմ նեղ որին՝ ախաղոր պես մենակ դուն ես ոգնել ինձ. քո լավությունը գերեզմանումս ել չեմ մոռանա:

Վասիլը բաժակներում մուգ թեյ եր լցնում, իսկ Մարուշը՝ կուղրաթի կեղատու ու կարկատած շորերի հոտից զգվելով՝ սեղանի մյուս ծայրին, հեռու նստած գուլքա յեր գործում և մեկմեկ ել ակնօցի վրայով նայում յերկուսին:

— Կուղրաթ, մի բան ունեմ քեզմե աղաչելու, մի ճար արա:

— Ե՛, կուղրաթ հնչի՞ չանե, խա՛զե՞յ:

— Յես գիղամ, վոր դուն լավ մարդ ես, — Վասիլը մուգ թեյով բաժակը տվեց նրան: Կուղրաթը յերկու ձեռքով բռնեց ու դրեց իր առջեկ: — Դուն կանես ու մարդու յել չես ասի: Հաց կեր. հռնս պանիշը:

— Վալահ յես չի՞դեմ, կուղրաթ կանես, իրա պան են լավ գիտես:

Կուղրաթը մանր կտորներով ուտում եր հացը կամաց ծամելով, իսկ պանիրը մեծ կտորով եր դրած և նա չել իմանում, թե ինչպէս վերցնի: Բաժակի թեյը լցրել եր ափսեյի մեջ ու շաքարի փոքրիկ կտորի ծերից կրծելով՝ խմում եր մանրիկ կումերով և աթոռի ծայրին նստած, նայում պատի հայելուն:

— Տեսնում եմ, վոր դուն կանես, դրա համար յես քեղ կտամ շատ, հասկմնում ես, — բութամատն ու ցուցամատն իրար շփեց:

— Խա՛զեյ, վալահ ետ մեկ չո՛ւզա, ամոթ, հնչի՞ կուղրաթ առանց դրան չանե՞՝ չե, կւանե, ասա՛:

Վասիլը ժպատաց:

— Կուղրաթ, դուքսնիս շատ նալոդ ա յեկել, արի ոթախներս մե շաբթով փոխենք:

Կուղրաթի մանր աչքերը հանկարծ խոշորացան ու սպիտակուցները դուրս ընկան, նա նստած տեղից թեքլեց յետ:

Վասիլը թեթև ժպատազ :

Կուղրաթն այդ չեր սպասում Վասիլից, բայց իսուք տվեց նրան, ամոթ համարեց յետ կանդնել մի կողմից, մյուս կողմից ել՝ աչքերի առջև բարձրացավ իր շածր, նեղ «ոթախը», ծխախոտի տուփի վրայի աղջկա փոքրիկ նկարը սկ պատին: Հետո հիացմունքով նայեց Վասիլի սենյակի առաստաղին, իրեն ու հայելուն:

— Իմ ոթախ ես ա,—ձեռքերով ցույց տվեց փոքրիկ տարածություն: — Քեզ փիս ա, վո՞նց ապրես:

Գիշերները, յերբ քեռի Արզումանը պառկում եր քնելու, մտածում եր առորյա մանր հոգսերի, Կալունիկ Բարսամի փոքրիկ խանութի տուրքի ու ընտանիքի մասին: Հետո արթնացնում եր կնոջն ու հարցնուած: Կաշկաչի Մելքոնի կինը տղա յե բերել՝ թե՞ աղջիկ: Իսկ կինը չեր արթնանում, վորովհետեւ Քեռի Արզումանի բեղերի ու մորուքի միջից միշտ փչում եր դառնահամ ողու չոր հոտը: Քեռի Արզումանը մտածում եր և նորից հարցնում կնոջը, թե ի՞նչ պիտի անի դիմարի կարող Յենոքը, յերբ նրա փոքրիկ տան կեսն ընկել և քաղաքի նոր պլանի մեջ, կամ թե Բախուլ Ծատուրը խանութը վոր փակեց, ինչո՞վ պիտի ընտանիքը պահի: Քեռի Արզումանը մտածում եր, վոր լավ կանի Բախուլ Ծատուրը, յեթե տեղավորվի ծառայության: Կառապանը մտածում եր և այն մասին, թե քաղաքի մի հին թաղը վոր քանդեցին այդի շինելու՝ ինչքա՞ն ու ի՞նչ ծառ են տնկելու: Նա նորից արթնացնում եր կնոջն ու հարցնում, յերբ յերկրաշարժ և լինում փլակում ե տունը, առաստաղում ապրող մկներն ո՞ւր են փախչում:

Գոմում խրխնջում եր ձին ու Քեռի Արզումանը շրջկում եր մյուս կողին:

Դավառական քաղաքի աշխան ոբերը տիտուր եյին ինում ու ձանձրալի, փոշեխառն քամին արշավում եր տուբների ու փողոցների վրա: Աշնանն անընդհատ արակ անձրև եր գալիս, հետո փողոցներում լճակներ լին գոյանում ու ցեխը պառկում եր մայթերի վրա: Թուլ-թուլ կախվում եյին անձրևի տակ քաղաքային աստարկ այգու և տնակների հատ ու կենտ ու մերկ ծառերի թրջված ծվենները: Մարդիկ ըրջում եյին սակավ և քչերն եյին կառք վարձում: Իսկ Քեռի Արզումանը այս արանում յերկար սակարկում եր անծանոթ ուղևորի հետ ու հետո դժողովում, վոր թանկացել ե գարին:

Քեռի Արզումանը հաճախ հին կառքի մասերը նուգել տալու յեր տանում կալունիկ Բարսամի մոտ, հետո նորից գեղութում առորյա հոգսերից:

Փոքրիկ քաղաքում փոքրիկ լուրն անդամ տածվում ե բնակիչների մեջ: Յեվ Քեռի Արզումանն ել ածվում ե բնակիչների մեջ: Վոր գեռի Արզումանը կարսամից լսեց, վոր շուտով քաղաքում պատրուս են բերելու:

Կառապանը տիրեց, հետո կալունիկը:

Քեռի Արզումանին թվաց, վոր յերկաթե մեքենան բուեն մտել ե փոքրիկ քաղաքը. վրնջում են լղարիկ բրեն իրեն, հետո խրանում, իսկ ինքն ընկնում ե կառարին իրեն, հետո կոտրվում: Կառապանին թվաց, թե ից ու կոտրվում կոտրվում: Կառապանին թվաց, իսկ կալունիկը անիվները գլորվելով փշրվեցին, իսկ կալունիկը տածեց, վոր Քեռի Արզումանը «Փայտոնը» ել չի բերի տածեց, վոր Քեռի Արզումանը կալունիկին և հառողել տալու: Քեռի Արզումանը կալունիկին և հառողել տալու: Քեռի Արզումանը հայշոյեց: Հետո քարատաց, և չհավատաց. բայց հայշոյեց: Հետո քարացը գլուխը, նայեց հեռու ու նրա բեղերը ժպտարացը գլուխը, նայեց հեռու ու նրա բեղերը ժպտարացը ին: Կառապանը պատմեց. քաղաքի «հարսաթալաները»

յերք «Թայընթաւէլեա» ու լաշակ կապած յելնեն բաղնիսից, ալիտի ավտո նստած վերադառնան տուն, կամ կերակի որերը, ինչպես ընդունված է, լվացք տանեն հեռու գետը։ Կառապանն ու կալոսնիկը ծիծաղեցին։

Ճիշտ է, վոր մարդիկ խորն ուրախությունից լաց են լինում, յերք դանում են իրենց կորած հարազատին։ Փոքրիկ քաղաքը «լալիս եր», իսկ կառապանն ու կալոսնիկը ծիծաղում։

Քեռի Արզումանն են գիշեր յերք պառկնց քնելու, նա յել չմտածեց հարեվանների ու մկների մասին և վուել արթնացրեց կնոջը։ Նրա ուղեղի ծալքերում պարտփում եյին իրեն հին կառքի անիվները։

3

Քեռի Արզումանը գիշերները հաճախ արթնացնում եր կնոջն ու պատմում բրդու յերեսով ու ցածրահասակ ծերունի կալոսնիկ Բարսամի մասին։ Կառապանը պատմում եր, վոր Կալոսնիկի փոքրիկ ու հին խանութը, վորը տախտակե կոտրտված փեղկեր ուներ, գտնվում եր քաղաքի ամենածայրամասում, գերեզմանոցի ճանապարհի վրա։ Կալոսնիկը տարիներ շարունակ խանութի դռան մոտ պահում եր յերկու հատ հին աթոռ։ Այդ խորհրդավոր աթոռների գոյության մասին գիտեյին փոքրիկ քաղաքի կենդանի ու մեռած բնակիչները։ Յերբ ասենք մի մեռել տարվում եր գերեզմանատուն, ճանապարհին վերջին անդամ դրվում եր հանգտանալու, այդ բոլորը կատարվում եր Կալոսնիկ Բարսամի խանութի դռան մոտ, նրա հին աթոռների վրա։ Կալոսնիկ Բարսամի այդ հին ու խորհրդավոր աթոռները, վորոնք այնքան ինամքով պահպում եյին խանութում, ծառա-

յում եյին հատուել այդ միակ բանին, վորի համար ամեն անդամ նրա կոչա ու սեվ բուն մեջ դրվում եյին սպիտակ-սպիտակ արծաթներ։ Հետո կալոսնիկը փակում եր խանութը և թափորի հետ հանդիսական քայլերով գնում գերեզմանատուն, ճանապարհին պատահած ծանոթներին պատմելով հանդուցյալի մասին։

Քեռի Արզումանը կնոջը պատմում եր, յերք կերակի ու տոն որերին քաղաքի արհեստավորները խըմբերով հավաքվում եյին «Պայվախանաների» գոնելու, կամ գնում քաղաքային փոքրիկ այգում զբոսնելու և յերկար ու կանաչ նստարանների վրա նստել-խոսելու։ Կալոսնիկ Բարսամը գնում եր գերեզմանները, հետո ինչ կեսոր, փնտում ծանոթների գերեզմանները, հետո ինչ գողի յերկարությունը չափում ձեռքի փայտով։ Իսկ ինչո՞ւ յերայլակես անում ծերացած կալոսնիկը Բարսամը—գիտեյին շատ-շատերը։ «Իրեն տարուների վրա—իրեն պառկելն ելի միտքն ե ընկել»—ասում եր գերեզմանոցի ծառան։

Քեռի Արզումանը յերբ կնոջը պատմում եր կալոսնիկի մասին, յերբեք չեր մոռանում այն գեղքը, թե ինչպես մի տարի նրա հետ իրեն կառքով գնացել են քաղաքից դուրս ման գալու և գետի կամուրջից անցնելիս Բարսամը կառքից իջել ու անցել ե վոտքով։ Իսկ ինչո՞ւ յե այլպես արել կալոսնիկը, նա վոչ վոքի չի ասել։ Իհարկե, Քեռի Արզումանն այդ բոլորի պատճառը գիտեր։

4

Անսպասելին կատարվեց աշնանային մի որ։ Այդ որը Քեռի Արզումանը կառքով գնացել եր կայարան, յեկվորներ քաղաք տեղափոխելու համար։

Սովորաբար վտագիկ քաղաքի կայարաններում դնացքները մեծ մասամբ դալիս են դիշերով, կամ լուսադեմին:

Ու այդ մոխրագույն լուսադեմը քաղաքի վրա բացվեց անձրևով:

Քեռի Արզումանը սպիտակ կայարանի դռան մոտ կառքի վրա անշարժ նստած՝ նայում եր թրջված ձիերի որածայր ականջներին ու սպասում: Կառապանի թրջված ու յերկար բեղերից կաթում եր անձրևը:

Յերբ դնացքը փնչալով կանդնեց, ուղևորները խըռավեցին: Կառապանները մտրակեցին ձիերին ու հայրեցին իրար, ինչ վոր բանի մասին վիճեցին նրանցից յերկուսն ու մենքի կնուտը կոտրվեց:

Զափից ալելի բծախնդիր մարդկիկ են այդ փոքրիկ քաղաքի ամեն բանի բներից դժուն կառապանները:

Իսկ Քեռի Արզումանը յեկոր ուղևորի հետ սակարկում եր յերկար:

Կառքերը սլացան ճանապարհի ցեխի ու անձրևաջրի լճակների միջուլ: Յեկեղեցուց վերադարձող մի պառավ, կառքերի հետեւից նայելով, ինչ վոր բան դժունեց:

Ցոլոր կառքերը դնացին. մնաց Քեռի Արզումանն ու նայեց ելի ձիերի թրջված ականջներին:

Այդ որը անսպասելին այն յեղավ, վոր յեկավ ավտոբուսը, քաղաքի բնակիչներից հետաքրքրվողներ յեղան ու գնացին դիմավորելու: Ամեն մի հասարակ լավագուցի յերջանկություն եր զգում առաջին անդամ վայելել նրա պատճառած բավարարությունը և հաղթական կերպով մտնել քաղաք: Մարդիկ նայում եին իրենց տափակ ու կոտրտված դեմքերը նրա դեղնավուն ու փայլուն կողերի վրա:

Հեռվում անձրևի տակ կանքնած Քեռի Արզումանին մի բողե այնքան խղճուկ ու փոքր թվաց իրեն հին կառքը և նա մի տեսակ ճնշվեց—ինչպես ցածրաւանի մարդը՝ բարձրահասակի մոտ:

«Յերկաթե առանց ձի կառքը» սլացավ ճանապարհի վրայով, հանկարծ դեմ ընկավ մի փոսի ու կանդնեց:

Քեռի Արզումանը միրուքը բարձրացրեց ու դժուազքերով նայեց հեռու, հետո մտրակեց լղարիկ ձիերին ու բաց թողեց սանձը: Յերբ նա հասավ փոսում ընկաւ ավտոյին, ինքնաղոհ ժպիտով նայեց կառքի վրայից.

—՞ո՞, քիչմ քարի լցեք առաջը, —ասաց Քեռի Արզումանը ու իրեն կառքը դովանը լինելու համար նած ձիերը քշեց ալելի արագ:

Այդ որը քաղաքի բոլոր կառապանները խոսում ու վիճում եյին «առանց ձի Փայտոնի» մասին...

5

Աշունը խորանում եր:

Ու խորանում եր կառապանի դժուությունը գեղի «յերկաթե առանց ձի Փայտոնը»:

Թեպետ Քեռի Արզումանի ոպատմածի պես քաղաքի «հարս-աբլաները» տրագիֆիոն բաղնաներից ավտոյով չեյին վերադառնում տուն և վոչ ել կիրակի որերը քաղաքի գետը լվացք տանում, բայց ուղևորներից շատ-շատերը կառք չեյին վարձում:

Քեռի Արզումանը փողոցի անկյունում, կառքի վրա նստած, փոշոտ աչքերով նիրհում եր իրեն ձիերի նման: Նիրհում եր և մտածում առորյա ապրուսում մասին: Ինքը և վոչ ել ուրիշները կառքեր նորոգել տու-

Եռ չելին տանում . ուրեմն քաղաքում ինչքա՞ն մարդ
պիտի մեռնի , վոր ասլըի կալոսնիկ Բարսամն իր աթոռու
ների յեկամուտով և խանութի տուրքը վճարի . մը
տածում եր Քեռի Արզումանը :

Առաջին ծյունը մի գիշեր թափվեց քաղաքի փո-
ղացների , շենքերի ու կտուրների վրա :

Վերջին անգամ Քեռի Արզումանի կառքը զաղաղի
պես կանգնեց տան բակում և նրա ձիերից մեկը գոմուտ
ականջները շարժելով քերեց զատարկ մսուրքն ու
վրնջաց : Իսկ Քեռի Արզումանը նայեց , թե ինչպես
քամին ցրեց գոմի դուանը դեմ որպած քթոցի գեղին
դարմանը : Թվաց թե դարմանի պես ցրվեցին Քեռի
Արզումանի մաքերը :

Մի որ ել կառապանն ափսոսանքով ծախեց իր պա-
ռավ մի ձին , վորպեսդի մյուտի համար դարման ու
դարի բերի :

Թեպետ Արզումանի կինը դժգոհեց , վոր ամուսինը
ձին չծախի ու հետո լացեց , բայց կառապանն ուղեց
հասկացնել կնոջը , վոր այն «առանց ձի Փայտոնն իրեն
դրել և կալոսնիկ Բարսամի աթոռների վրա» :

Կառապանը բեղերը թքոտեց , թոնթորաց մի քիչ ու
հետո քաշեց ձիու սանձից :

Փոքրիկ քաղաքի ձմեռն ել իր հմայքն ունի :

Հետեվյալ որը Քեռի Արզումանը սահնակին զան-
դակներով լծեց իր միակ ձին և քշեց քաղաքի փողոց-
ներով :

Շատերը ցանկացան սահնակ վարձել :

Քեռի Արզումանը յերբ փողոցում հանդիպում եր
ավտոբուսին , քաշվում եր դեպի ափ ու հանապարհ բաց

անում նրա համար : Կառապանը հաշովել եր «առանց ձի
Փայտոննի» հետ , թե վո՞չ , վոչ վո՞ք չդիմեր , միայն յերբ
պատահում եր նրան , թքոտում եր բեղերը , նայում ի-
տեմից ու բաց թողնում ձիու սանձը :

Յեվ ապրում եր համառ ու ինքն իր մեջ պարծե-
նալով՝ փոքրիկ քաղաքի Հին կառապան Քեռի Արզու-
մանը :

ԵԼՖՈ

Նրա ջինջ աչքերը հայացքներ ունեյին, վոնց վոր լույս սրած գեղանդի: Նրա ծամերի խոպոպէկները նման ելին դարու վոսկեպույն խուրձերի:

Յերբ ճնվեց Ելֆոն, են դարնան Հովոն առվակի տփն անուշ նշենու մի հունա ցանց: Հետո ել գարուններ յեկան արագիւներով, Հովոն նշենուն եր խնամում, իսկ մայրը՝ Ելֆոյին:

Նշենին ծաղկեց, փթթեց դարնան առաւ արեկ տակ. Ելֆոն ել հետը հասակ քաշեց նրա պես; Նշենու բնի մեջ ողակների տասներկու գիծ եր բոլորվել: Ելֆոն ել տասներկու դարուն բացվել եր նշենու ծաղկի պես: Նշենին գունատ լուսնին եր նայում՝ բարակ ստվերը հողին դցելով, իսկ Ելֆոն պիտուններ եր գյուղում:

Գյուղի անսահման դաշտերի ու զուլալ առվակի պաղ ջրերի պես պարզ եր Ելֆոյի հողին: Խմորի նման փափուկ շրթերին նրա միշտ խաղում եր ժպիտը գարնան արեգակի պես պայծառ: Ելֆոյի ծիրանի շրթերը կլոր լրջանում ելին հաճախ, հետո նրանցից կախվում եր և՛ կամք և՛ կորով:

Գյուղի արտերի ու շեկ հասկերի հատն ուներ Ելֆոն:

Արտերն ու դաշտերը նարնջի դուքն ելին հագել: Արեք գունատ հանդում եր դաշտերի յետև ու բեկված շղերը խաղում ելին աղավնափետուր ամպերի փլու փուր քուլաների հետ: Աշնան քամին սուրում եր գյուղի փոքրիկ խրճիթների ու կալերի վրա:

Են որն Արեթը Հովոյին տարակ իրենց տուն, ողի խմեցին ու խոսեցին շատ:

— Հովո, սնդուկումս փողեր ունեմ անհաշիվ, Ել-

Փոյին պսակե ինձ հետ, քեզ ել փող կտամ շատ:

Հովոն նշենուն հիշեց:

Ու լրախը գունատ խճճվում եր նշենու ձղներուս բարակ:

— Հովո՛, թե աղջիկ ունես, թաքուն պիտի պսակես թե՛զ. հետո վոր մնա, կղալբանա... Դե՛, տեղս ել կեղա՞մ, հո տեսնում ես, մարդու վոնց են գաղում: Մի նեղա՞մ, հո տեսնում ես, մարդու վոնց են գաղում: Մի նեղա՞մ, հո տեսնում ես, մարդու վոնց են գաղում: Հո՛զ, հող ա հարկանչի հողով չեմ կարող յոլա գնալ. Հո՛զ, հող ա հարկանչի հողով չեմ կարող յոլա գնալ. Հո՛զ, հող ա հարկանչի հողով չեմ կարող յոլա գնալ.

Ելի ողի խմեցին, խոսեցին յերկար: Արեթը հայ-
շոյեց ինչ վոր մեկին. Հովոն հետ դժգուհեց ու բռունցը
ձոճեցին:

Արեթը Հովոյի աջում գրամներ դրեց:

— Լա՞վ, — տաշ Հովոն:

Են գիշեր անձրւ յեկավ կտուրների, կալերի ու դեղերի վրա: Առվակի կողքի նշենին քամու դեմ տարուքերիւնց ու դողաց, թրջմած նղները թույլ-թույլ կախվեցին հօրդ անձրեսի տակ, վոսկե տերները թափեցին խոնորդ հողին:

Դուրսն անձրևը սաստիացավ, ծեծեց դուռ ո՛ո
կտուր:

Են գիշեր Ելփոյի մայրը լացեց անձրևի պես:

— Սո՛ւս, Հարութի աղջիկ, քո խելքն ի՞նչ ա հաս-
նում. բարին ես ա, թող սիրով շեն ողախ ըլեն:

Հովոն չարուխների և շալե ծակ գուլբեքի հողն եր
թափ տալիս:

Ելփոն քնել եր խսրի վրա, խոպոպիկները բարձին
դրած:

Բարձրահասակ մարդ եր Ելփոյի հայրը, այծի մի-
րուքի պես մի մատ մաղ կախվել եր նրա ղեմքից, աչ-
քերը մախաթե ծակերի նման նեղ եյին: Ցըտից ու
ողուց կարմրած չեզոտ քիթ ուներ նա: Հովոն իր ման-
կության որից դոմի ցախալելի հետ անբաժան ընկեր
եր յեղել ուրիշի դռներին, նրա հետ հավասար մաքրել
եր գոմն ու բակը, իսկ հետո ցախալելը դռան յետևն
եր ցցվել, ինքը պառկել եր մսուրքում՝ յերազել եր
կին, յերեխա ու շատ փող ունենալ:

Աբեթն ել ծնված որից սիրում եր նայել մոր ծա-
կատին շարված վոսկիներին շողշողում, հետո յերբ ար-
խալուղ հագավ, ուղեցավ գրավանում ունենալ նրանցից
շատ:

Եերբ հայրը մեռավ, Աբեթին աստղերի թվի պես
վոչխարներ թողեց անհաշիվ: Ու գիշերները քնելու
պառկելիս Աբեթը մտածում եր վոչխարների ու դյուղի
սիրուն աղջիկների մասին:

Մյուս առավոտ հերարձակ արևը նորից յելավ,
արտերի վրա փայլեց հաշտ ու վոսկի մաղեց:

Հովոն Ելփոյի ձեռքից բռնած տարավ նրան, իսկ
ծագըլ չեմքին կանգնած, գողնոցի քղանցքն աչքերին
արցունք թափեց թաքում: Ելփոն հազել եր մոր գու-
նավոր, թիթեղյա սնդուկում պահած ծիրանի շորերը
խաս:

— Ապի՛, ո՞ւր ենք եթում:

— Արի, բալա ջա՞ն, արի՛:

Հովոն Ելփոյին տարավ Աբեթենց տուն:

Եերբ գուռը բացին և ներս մտան, Աբեթը բեղերն
ու չուխի ոճիքն ուղղեց:

Հովոն ու Ելփոն նստեցին թախտի չեչոտ տախտա-
կի ծերին: Ելփոն կպել եր հոր կողին. «Ինչո՞ւ աչքերի
ծերով եղակն աշեց», — մտածում եր նա:

Աբեթը սնդուկից ողու շիշը հանեց ու ելի խմեցին:

— Աբեթ ջա՞ն, ել ի՞նչ ասեմ. լավ թե վատ, սրանիդ
ուզածն ա, քեզ եմ պահ տալիս, սրանից յեղնա ինչ
կուգես արա:

— Թասիր ասած բանը հմի շատ քչերն ունեն, հա-
մար յես իմ թասիր ու նամուսի տերն եմ, առել եմ՝ պի-
տի պահեմ:

Ելփոն չեր լսում ապու ասած խոսքերը:

Դուրսն աշնան արևն եր պայծառ. Ելփոն ուզում
եր խաղալ արեսի տակ ու քաշում եր հոր մաշված չու-
խի ծերից:

— Ապի՛, դէ յել եթանք:

— Համբերի, բալա:

Ելփոն աշքերը թափել եր դժունին, կարնես վա-

թելով Արեթի բեղերից, ու նայում եր կարգեաի խունացած նախշերին։ Սնդիկի նման աշխույժ Ելփոն թըլքել եր յերկար նայելուց։ Նրա դրսխը ծանրացել եւ ու ծնոտը հենվել կըծըին։

Նրանք խոսում եյին ու մեկ-մեկ եւ չըմերը կը կում ողուց։

Յերբ Հովոն յելակ թախտի ծերից, Ելփոն սթամփեց, աչքերը բացեց, վուոքի կանգնելով։

— Բայս՝, ճմի դու պիտի ըստեղ էնձաս։ ևս տանք նամուսով հարս կըլես, հորդ պատիվը խայտառակ չառնես ու են պիտոներին եւ վերջ կտաս։ Հաշմի թե մեր տանն ես ու մարդ թող չխմանա։

Ելփոյի աչքերից կայծակներ դուրս յեկան, վոնց վոր մեկն ամուր ապօտակեր, հետո հոր չուխից կափ ընկավ, լացեց։

— Միրտք մի շուռ տա՛, բայս՝ յես ելի թեղ-թեղ կդամ։ Մեր կովի կաթից քեզ եւ վիայ կըերենք։

Արեթը նայում եր Ելփոյին, մատներով չուխի ծերը խաղացնելով։

Հովոն յերեսը շուռ տվեց դեպի դուռը։ Ելփոն կախվել եր չուխից, բայց յերկու ձեռք պոկեցին նրան հոր փեշից։

Մահու պես ծանր փակվեց զուռն, ու նրա արցունքու աչքերը վերջի՞ն-վերջի՞ն անդամ տեսան դիմացի խոտի դեղին թափկած աշնան արեի շողերը գուշանուա։

Աւ մի ճերմակ աղավնի թորակ՝ կարմիր կտուցին չի դեղին հասկ անցրած։

Ելփոն լացեց, ջինջ աչքերի անկյուններից զարու հառիների պես արցունքներ թափեց բերանի ձայներից։

Արեթը ճնշում եր, դողում եյին ըրթերը նրա, ճշում եր Ելփոն պատին կպած։ Արեթին թվում ելուաշխարհը վոր կա՝ եղ իր տունն եւ, կյանքը՝ վոսկիները դեղին ու Ելփոն։

Տունը որորվում եր Ելփոյի աչքերում, վոնց վոր ջրհորի հատակը քար գլորեն ու ջրերի կոհակներն ողակ-ողակ որորվելով զարնվեն մութ պատերին։

Խրճիթի դուռը թակեցին։

Արեթը հեռացավ Ելփոյից, Թքոտեց հատակին, մուեցավ դունը։

— Արեթ ամի՛, ճեր կովերը մտել են կոմունի արտնու ցորենը խարաբ արել, քեզ վրաղ կանչում են, — դըսան Ըեղքից ներս սողալով հեկէն ասաց պիտոն թաթիկը։

Հետո նրա աչքերը սաւեցին անշարժ, Ելփոյին աեսնելով պատին կպած…

Ելփոն լալով նորից վաղեց դեպի դուռը, Արեթն ելի հեռացրեց։ Արեթի աչքերում ա՛ս կար Թաթիկին դուրս յնչնելու նշան արեց։

Արեթը դուռը կողպեքով փակելիս շնչաց։

— Քեզ ըսենց կպահեմ, բայնիքն ել՝ ջիբում։

Հետո նա Թաթիկին խոստացավ.

— Յես քեզ համար չարուիներ կառնեմ. լա՞վ. մարդ թող չիմանա։

Արեթը կանգնեց ըսանը, մինչեւ վոր Թաթիկը մասմալոր, պարմացած հեռացավ, հետո ինքն եւ դըսաց։

Նրանք քայլում եցին հակառակ սազբով յամբ շցուի նույն նեղիկ քուչայրվ առկայն յերկաւան ել մասաւամ եցին Ելֆոյի մասին:

Թաթիկը գնում եր, մեկ ել մտածում . «Ա՞խը Ելֆոն ինչո՞ւ յեր լախս Արեթենց տանը» : Նա հիշեց իրա ըրոջը, փաքրիկ Սոնային, վորին պսակի չորեր հար ըլքած տարան հարևան դյուղը և ել յետ չբերին : Նրա աշքերին պատկերացավ դյուղից հեռու սառը հողաթումբն իր փոքրիկ քրոջ : Նրան թվաց, թե նրա կողքին մեկն ել ավելացավ—Ելֆոյինը :

Թաթիկը գնաց հավաքեց ընկերներին իրա :

Պիոներական ակումբում մանկական փոքրիկ գլուխները շրջապատեցին Թաթիկին ու նա զայրույթով վողեվորված Արեթենց տան տեսածը պատմում եր նրանց : Հետո մի քանիսը բռունցքներն ամուր սղման ոգում ճոճեցին . սկիոներական կամքն եր բռունցքի պես ամուր կծկվել : Գյուղի տափակ կտուրների տակեց յելած վերջին ուժն այդ բռունցքի նման կանոնել եր հարվածի վոստիր դիմաց :

— Ելֆոն մեր ընկերն ե, տղե՛րք, նա զոհ ե զնում հնին, ել ի՞նչ պիոներ ենք, վոր չոգնենք նրան, — իսուց վտիտ Պետիկը, հետո լոլող Արշակը : Իսկ կտուրների վրա յերկու պիոներ քամու բերանն ընկածի պես վաղում եյին կին-բաժին : Յերբ նրանք վազում եյին, աթարի բուրդերի յետեկց դուրս յելավ պառավ մի կին ու թրցու ձեռքով կանչեց յետեվներից .

— Այ, հոդս ձեր գլխին, հերեօ խաղ անեք, կտուրը փառ եկավ :

Արեթը վերադառնում եր տուն, հայհոյում եր ինչ վոր մեկին : Նրա վարի ըլթունքը մանգաղի պիս դողում եր խոտի նման ծլած բեղերի տակ :

Տղերքն ու կին-բաժնից Ելֆոյին տանելու յեկան : Յեկան խոսքերով վոնց վոր գերանդի, խոսքերով ու կամքով հզոր :

Խալիր կտուրն եր յելել թամաշի :

— Ա, դե՛ ամոթ ա եղ թավուր կասկածանքի, յետ և հասակի մարդ եմ, եղ ել մի մատ երեխա . . . իեղձն իրա կամքով ա եկել, հալա մի ուշ փեշքեշ տվի . բաձեր ասելն ի՞նչ ա, բարեկամիս տուն չթողամմ :

— Սուտ ա . . . նա ինձ . . . հուղմունքից լալիս եր Ելֆոն :

— Զե՞ , խարար Ելավ ես . աշխարհը, ընչե՛ր չեն մոգոնում, — ասում եց Արեթը, վոնց վոր միամիտ ու աչքի տակով խեթ-խեթ նայում Թաթիկին, զայրույթից ատամները կրծոտելով :

Եղ հարցը ծեծվեց գյուղում ու կենարոն հասավ : Հետո թե ո՞ւր տարան Արեթին, գյուղում շատ խոսողներ յեղան եղ մասին :

Հովոն են որից հետո Ելֆոյի հետ խոսելիս վոնց վոր ամաչելիս լիներ ու խնամում եր առվակի ափին բուսած նշենուն : Նա ուղում եր, վոր իր աղջիկն ել կանանց ժողով վարել իմանա :

Գարուններ յեկան շատ : Առվակի ափի նշենին ծաղիկներ տվեց : Ելֆոն նշենու նման հասակ քաշեց ու հետո իրենց գյուղում կոմսոմոլ անցավ : Ու Ելի լուսի-

Նր սպիտակ սինու նման յելնում եր բլբների ու արտե-
քի ուսերից : Քամին սուրում եր դաշտերում , շվշվա-
ցնում խոտերն ու ուսուլ յերգ Եյին փալիսում բարդինե-
րը , ուսիները լուսնի ստվերներով թեքվում ե-
յին քչքչան ջրերի վրա ու լսվում հեռվում ճռճռացող
ու մեռնող ճպուռի ճոխնչը խուլ : Խուսինը հեռանում
եր բարդիների կառաբներից :

Արտերում որորդում Եյին , ծփծփում դարսու հաս-
ելը՝ հարսների պես հզի :

1929 . Գարուն :

ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵԶԻԴԻ ԹԱՂԸ

Նրանց տունը գունավոր մեջիդի կողքին եր կտուն և
նման եր հարեան մյուս բոլոր աներին . իսկ չուրջն ա-
մեն ինչ գորչ եր՝ քանդված ու հին : Փողոցներ ծուռ ,
ինձված իրար , բարձրանում Եյին դիք , հետո իջնում :
Փողոցներ ել կային նեղ , ուր մայթերին պատից-պատ
կպած քանդումված սանդուխներն Եյին փոխարինում :
Դիմացից յեկողին ճամբար տալու համար անցնողը մեջ-
քը պիտի պատին սեղմեր : Յերկհարկանի խարխուլ տը-
ներ կային կապույտ ու զեղին փոտած պատշդամքնե-
րով , վորոնք հեռվից նայողին թվում Եյին ոդի մեջ
կտիւմված : Տների պատերը մոխրի գույն ունեյին , վո-
րոնց արանքից կարմիր աղյուսներ Եյին գուրս թափ-
վել : Գալարվազ փողոցներում մեկ-մեկ յերեվում Եյին
չաղբաներով կանայք , պատերի ստվերների տակ յե-
գուները գուրս պառկած՝ շոգից հեացող մի քանի չներ :
Արեկ շողերը փոս փողոցների շենքերի վզից չեյին
թակիւմ նեղ մայթերին :

Քաղաքի այլ փոքրիկ ծայրամասը խաղաղ եր ամա-
ռային նարնջադույն անդորր իրիկվա նման և ամեն ինչ
գորչ ու առորյա :

Գունավոր մեջիդի մոտ գտնվող տան մեջ եր ծնվել
Միրզան , հետո մեծացել , հասակ եր քաշել բակի թթւ-
ռու պես : Դալաքի բարակ ածելին յերրորդ տարին եր

թրաշում նրա շամամ դեմքին ծլած նոսր աղջամազը։ Այն տան մեջ եր մեծացել դեղին միրուքով, սեխի նըման դլսով ու կեռ քթի լորիաձև խորչերի արանքից կախված բարակ ու յերկար բեղերով հայրը—Արասը։ Միրզայի մայրը, Նաղմ հանըմը, դեռ տարիներ առաջ եր յեկել այդ տունը, վորպես հնաղանդ հարս պարսկական չաղրայի մեջ փաթաթված։

Միանման խաղաղ տարիներ եյին անցել իրար յեկից։ Նրա կլոր ու գեղեցիկ դեմքը թառամել եր, ամեն տարի մի նոր կնճիռ նվեր ստանալով։ Նա իր մազերին վոսկեմույտ հինա յեր դնում։ Պապական այն հընամյա տանը, վորտեղ սերունդներ եյին փոխարինել միմյանց ու ապրել հայրերի ավանդով, Միրզայի ամուսնությունից հետո՝ առաջին անդամ խոռություն տիրեց։

Գեղեցիկ եր Նաստիլլան։ Նրա ծիծեռնակաթեղ բարակ հոնքերի տակ նստել եյին քաղցր ու թղի պես աչքերի կլոր բիբերը, արտևանունքների յերկար մազերը նման եյին դարնան արեգակի առաջին ճառագայթներին։ Զույտ թշերի պես շրթեր ուներ, սուր ու բարակ։ Կարճ կտրած մազերի խոսպալիկները ծոծրակից բաժանվելով կոր գծով փերջանում եյին նրա ականջների բլթակների մոտ։ Նաստիլլան Միրզայի նման ՀԱՄ ուներ կըպցըրած ձախ կրծքին, հենց սրտի վրա։

Հնամյա տան կարիքն եր, վոր Արասին նետել եր «համամ» քիսա քսելու, վաղ առավոտից մինչև ուշ յերեկո, մինչ թավշագույն գոլորշու միջից կախված ելեկտրական լամպը թարթում եր իր լուսաշքը։ Միրզան «դարախանում» մեջքն աղեղած գունավոր կաշիք եր սարքում։ Այն պաղպահի առջեից եր, վոր կյանքը նրան նետել եր ուրիշ միջավայր։

Յերեկոները, յերբ քաղաքի այդ փոքրիկ ծայրամասին փոքրիկ, բայց գլխավոր փողոցում այնքան յուշ-մեր կվառվելին, Արասը կերթար այն «չայխանեն», վորի թեքված ու ծխից սեղացած ցուցանալի վրա գըրված եր։ «Շիրին չայ, քյարալ-տակն ել մեծ-մեծ տառերով—իրան»։ Ներսում, դռան հենց յետև, յերկու գեղին ինքնայեռ, ճերմակ գողնոց կապած մի մարտ, վորը նման եր թեյի գդալին։ Յերկար սեղաններ, անվերջ հաճախորդներ, «շիրին չայ»։ բաժակներ, նարդու չխկ-չխկոց, պատին նախշուն մի խալիչա ու ելի նկարներ ծուռ, փոշով ծածկված, իսկ այդ բոլորի վրա ծուխ ու խանձահու։

Արասը յերկար սեղաններին քավելով կանցներ խորքի մի գոնից ներս, վորտեղից դուրս եր գալիս վշշացող Քորի վրա կախված պատշամբը «Շիրին չայ» խմելու։ Մուգ թեյով լի ափսեն շրթերին մոտեցնելիս թղերի ծայրերը փուլում եյին թեյի մեջ։ Արասի քթի վրա ու աչքերի մոտ, ճաղատի գլխի նման անհալասար անել եյին մազերը, գործնց տակ միշտ լճացած եյին քրտնքի կաթիլները։ Բնատանիքի խոռոշությունը նրա գեղին միրուքին ճերմակ փոշի յեր ցանում։

«Չայխանում» մի զաղտնի անցք կար, կոտրաված անդուխներով վերնահարկն եր տանում։ Վերնահարկում մի փոքրիկ սենյակ կար մրոտ պատերով ու մի քանի հին թախտեր, մի ճրագ ճեթի՝ փշրված ապահով։ Այդ անցքի մասին «չայխանի» տերը գիտեր, Արասը, մեկ ել մի քանի պարսիկ։ Ու հաճախ Արասը, վշտերը մոռանալու համար, կոտրոված սանդուխներով վերնահարկը կելներ թաքուն։ «Չայխանի» մի անկյունում կծկված այն գունատ մարդը կնկատեր աչքի անկյունով, հետո գեմքի մկանները խաղացնելով կհաս-

կացներ, թաղթեյը ձեռքին, գոզնոցավոր մարդուն.
«Արասն ոսպիում ե ուզում»: Ու մտքում կմտածեր, «Ե՛,
աշխարհը զալբացավ, տղեն ուրանում ե Հորը»:

Յերբ Արասն ամեն որ «չիրին չայ» խմելու կերթար,
Միրդան ու Նաստիլան յերիտակումբում եյին լինում,
իսկ Նազըմ հանըմը հին տան պատերի մեջ նստած իր
վերջին որերն եր կծկում, պառավ կատվի պէս մոռա-
լով:

Մի որ Արասը յերկար պատշգամքի անկյունում նրա-
տան «շիրին չայ» եր խմում, ու Քոի մարմանդ հովք
շփում եր նրա քրտնաթոր ճակատը, իսկ վարը, պատը-
գամքի հենց տակը, նեղ ու յերկար նսովակից կանաչ
տուկան եյին զցում ջուրը: Յերկու պարսիկ յեկան և
նստեցին Արասին, գուցե և բարեկամ, բայց ալամ չը-
տավին, չնկատեցին, զորովհետեւ արդեն թանձր մթնշաղ
իր իջել: Նրանցից մեկն իր կեռ մուրճն ուսից վար դնե-
լուց հետո, հողուածեռքով չոր՝ ճակատի քրտինքը սրբ-
րեց ընկերոջը զառնալով.

—Ե՞ս, իրադ, մարդիկ վաղուց են պղծվել, կորց-
րել են նամուս ու աղաթ, այիբ չունեն և վայ նրան, ով
մեղնից հետո պիտի ալպի: Մեռնելը կյանք ե:

—Ֆալա՛կ, — ծոր տվեց մյուսը, ուսած փորով բա-
ժակի մուղ թեյը խմելով քիսաչի Արասի ողախն ել
պղծվեց, տղեն զյալուր ե, հարսը՝ լիրք, յերեսը բաց,
քրաչալ զիմով խալիսի մեջ ե զնում: Մի ձեռքով դեմքի
կեզ մասը ծածկելուց հետո, ուսն ընկերոջը թեքեց—
Ասում են, թե ուրիշի հետ ե ապրում. իսե՞ղմ, իսե՞ղմ
Արաս:

—Ե՛, ջանմ, Արասը նամուսը կորցրել ե:

Արասն ականջները սրած լսում եր: Նա գեռ շստ
րան կլսեր, յեթե իրեն զգար ձկնորսի ուսկանում թր-
պղբացող ձկան նման: Նա ձեռքը կծկեց, ամուռ խիմք
սեղանին. զատարի բաժակը զլորվեց ու ընկավ հատա-
կին, փշուր-փշուր դառավ: Արասի սիրան ել կոտըր-
վեց բաժակի նման: Նա յերկար սեղաններին քավելով
դուրս գնաց շուրբթերը կրծուաելով. «Ոչախու չայխանի
մարդկանց խորաթա՞ դառավ: . . . նամուսդ կորցրել ես . .
չե՛, հերիք ե՞ . . . յես չմ թողնի՛, յես մարդ եմ, զը-
խիս ֆես ունեմ»: Զայխաննեն խառնվեց իրար, ու անձա-
նոթ մարդիկ զարմացան. մի բովե բոլոր չարժուանները
կանդ առան և բոլորի հայացքները շրջմեցին գԼայի նա:

—Հարսին ելի առանց չադրայի տեսավ, —իսուեցին
«չայխանի» մարդիկ: Իրադն աւ իր ընկերն ամսթով ի-
րար նայեցին: Քիչ հետո կոտրված սամադուխքի մոտ
հոսող գունատ մարդը, վորն Արասին ոպիում եր տալիս
թաքուն, «չայխանի» անկյունում հավաքված մարդ-
կանց նրա վիշտն եր պատմում, միքուքը շիմելով ու
ձեռքով ողի մեջ կիսաշրջան քաշելով: Հավաքված բոլոր
մարդկանց գլուխներն որորվեցին ու մի միւռ մեկից
խնցավ մյուսին:

—Ե՞ւ, ի՞նչ պիտի անի, աշխարհը հիմի եղակն ե:
Արասը փողոցում վոնց վար չինովցած, կպչում եր
մարդկանց ու սրորվելով կնում առնեն: Նա ուսն հա-
նելուն պիտ հավաքեց Միրզայի ու հաստիլույի իրերն ու
բակը թափեց:

—Ելի սկսեցին, մատածեց բակում լիացք անող հա-
րեան կինը:

—Նրանք իմ տանն արժանի չեն. յես նամուս ունեմ,
Բող «չայխանի» մարդիկ չխոսն, հերիք ե:

—Արասն, այիբ ե՝ ասում եր նաղրմ հանըմը:

— Եսուս, եղ քո զործը չե՛, յես չեմ ուղում նրանց
հետ ապրել:

Թվում եր, սիրաը բարձրացել եր մինչև կոկորդը,
ձայնը խղում եր:

— Աբա՛ս, ի սեր ալլահի, ջահել են, կուղղվեն,
մոլեն ու մեջիդը կոդնեն:

— Կուղղիթ՞ն: — Աբասը ձայնը մեղմացրեց:

— Ես մի անդամն ել բաշխի, ել չի ըլի, հավատա:

Քիչ հետո Միրզան ու Նաստիլան յեկան, յեր
Արան ու Նաղըմ հանըմը դեռ վիճում ելին իրար հետ:

— Կորե՛ք դուրս խմ տնից, դուք խմ նամուռը ծախել
եք խալիսին:

— Բաբա՛, մի գոռա, ես մի շաբաթ ել կապրեմ,
հետո ինքս կերթամ, նոր տուն են շնում:

— Ես մի անդամն ել բաշխի, ել չի ըլի, հավատա:
Դաթը չուրանա:

— Բաբա՛, քո սկապերն աղաթից սավահի վոչինչ
չեն թողել:

Նաստիլան պատին կողցնում եր Լենինի մեծ նկարն
ու Նաղըմ հանըմը հուղմունքից գլուխն եր ճոճում ուսեւ
րի վրա: «Ո՞վ է այդ մարդը» մտածում եր նա: Թվաց,
թե «այդ մարդը կիմի տունը քանդողը»: Յեվ նա վո-
րոշեց: Քնելուց առաջ «չար» մարդու նկարը կրակը դժի,
վոր տան կուռից նրա ծուխը բարձրանա ու կորչի զե-
շերվա խավարի մեջ:

— Քանի յես ապրում յեմ ես տանը, թող ձեղինից
մեկը չմոտենա ես նկարին:

— Տունն իմն ե, — մույլված ասաց Աբասը:

— Նկարն՝ իմը:

— Կիջեցնեմ:

— Զեռքը պատիցը կմիեմ:

Յեվ այլակեց՝ ամեն զիշեր խռովում եյին ու կալում
պապական արև տան անդամները:

Գիշերները, յեր մայթերը զատարկվում եյին ու
շուսնի յեղջուրը նեղ փողոցների ժապավենանման լո-
ղուր յերկնակամարից ընկնում եր քանդված բերդի պա-
րիսաների յետեւ, այն անցած դարերում շինված բարձր
պատերն իրենց ստուբներն եյին տարածում ցածում
թափված տների վրա: Այն անհիշելի ժամանակվանից
շինված կիսավեր տներում, ուր մարդիկ ապրել ու
զվարձացել եյին իրենց նախորդների նման, վաղուց ար-
դեն փոխվել եր հին կյանքը և մտել եր հունդն այս մեր
նոր կենցաղի: Յեվ կյանքն ամեն վայրկյան գործում եր,
բարձրանում ու պայքարում այն գորշագույն կղմին-
կտուբների տակ:

Մյուս որը նեղ փողոցներով չաղքայի մեջ փա-
թաթված մի կին եր գնում: Նաղըմ հանըմն եր: «Նա
գնում եր իր խոռված ընտանիքի «Արքությունը» բերե-
լու: Գորշ փողոցների միանման շննֆերի առջևից անց-
նելով, հասավ կիսաքանդ փոքրիկ մի զարբասի, ապա
կունակալով ներս մտավ ու մինչև վուաքերի հոգնելլ նա
իջնում եր քարե քանդրաված սանդուխներով: Կիսա-
մութ, տուփի նման փոս հայտը, վորտեղ գաղջահոտն
եր նստել՝ կամարակատ պատի տակ զիզված աղբի
կույտի պես: Նաղըմ հանըմը քայլերն ուղղեց մտւթ հա-
յաթի մի անկյունն ու գլուխը կրծքին խոնարհելուց հե-
տո նեղ գանից ներս մտավ:

Խորհրդավոր այն սենյակի ու պատերի անկյուննե-
րից մեկում, հատակի փոքրիկ քառակուսի խալիչի
վրա, ծալապատիկ նստած եր խունացած լեն թիկնոցով
մի մոլլու: Գլխին փոթաթաթած ճերմակ կտորի տակից

կախվել եր նրա գեղնաովուն միրուքը : Նայելիս թվում եր , խօս հոնքերի տակ , մեջիդի մութ խորշերի նման աչքերի մեջ նոտել եր խորհրդավոր ինչ վոր հանկլուկ : Նա իր առջեի ժամակինանման թղթերի վրա՝ ծփածուր բոլոր գույներով նշաններ եր գրում :

Սենյակի հատակի տակը վշտում եյին ֆոխ ալիքները . թվում եր , նա մի որ պիտի վարարեր և իր ուռացող ալիքների հետ պիտի քեկը ու տաներ խորհրդավոր սենյակը՝ զորշագույն միրուքավորի հետ միասին , վորի մասին դեռ ահով եյին խոսում քաղաքի այդ ծայրամասի խարիսուլ տների բնակիչները :

Նաղըմ հանըմն իր ոջախի համար սրբություն եր հայցում մոլլից :

— Ոխտն որ , ոխտը գիշերվա մեջ զիր կապեմ , վոր թուրն ել չկարի : Ալլահի ու փեղամբարի աշը դորեղ և : Յերազ տեսա , ասում և . — խալիք մոռացել և մեջիդ ու զուռան , նամազ չի անում : Յես ել նոր պրծա նամազ : Կուռանի կողքին զրված և՝ — ալլահը բարկացել և ստամիկ :

Մոլլեն յերեք կանոքունաբոյ չիբուխը փառացրեց , իսկ նրա կրծքին փռված միրուքի մազերի ծայրերին անդամ նստել եր պահանջ : Նա գլուխը կախած , շիում եր մազերի ծայրերը :

Յերբ մոլլեն շիում եր միրուքը , ամեն մի այցելու իմանում եր , վոր պարտք ունի վճարելու :

Նաղըմ հանըմը յետ տարսակ իր չափայի քղանցքի ծայրը , զորացող ձեռներով հանեց ծաղկավոր մի թաշկինակ , քանդեց ծայրերի հանդույցը և դեղին վոսէկնչյուն պարսկական մի դրամ դրեց մոլլի աջը :

— Թող զիրը զորեղ լինի . խոսովանվեմ պիտի ալլահին , վոր եվել չունեմ :

Յերբ նաղըմը հանըմը գուռոն իր յետեկց ծածկելով զուրս յելտվ , խորհրդավոր սենյակի գեղին միրուքուրն ինքնագոհ ժպատաց , վոսկեհնչյուն դրամը մատների մեջ խաղացնելով :

Նաղըմ հանըմը սանդուխքներից բարձրանալիս մը տածում եր «գրերի» զորության մասին : Իր միակ գրամը , վոր տարիներ շարունակ խնամել ու այնպես խորն եր պահել նեղ որվա համար , Արասից թաքուն նա ուղից մոլլին , վոր տան խոռվությանը վերջ լինի :

Նեղ փողոցներից մեկում նաղըմ հանըմը պատահեց նաստիլային , սիրոն ալլելի կծկից շաղրան հեռացրեց ու դլուխն որորելով նայեց նաստիլայի յետեկց , իսկ նա զնում եր ակումբ , անաստիվածների խմբակի պարապմունքին :

Սովորական մի իրիկուն եր : Տանը վոչ վոք չկար բացի նաղըմից : Նրան թվում եր , այդ յերեկո ինքը վերջ և զնելու իրենց տան խոռվությանը : Նա զգուշությամբ բռնել եր մոլլի «գրերը» և մեղրամբովէ վրա ամրացրած՝ Միրզայի ու նաստիլայի մազերից միմի փունջ : Նա անհանգիստ եր , կարծես լսում եր մեկի փոտնաձայնը : Նա իրենց տան դռան շեմքի վրա կանոնեց , շուրջը զննեց . «Այնպես արա , վոր մարդ չտեսնի» — տակ եր մոլլեն : Նա կուցամի , շեմքի հողը մատներով փորից ու «գրերը» թաղեց դռան տակը : Յերբ նա իր ձեռքը զրեց մեջքին ու աղեղած վողնաշարն ուղղեց . . . ապշանք . . . նրան թվաց , թէ զիմացի քանդված պատի վրա նատած եր այլանդակ մի հրեշ , վորի ականջները մեծանում ու փոքրանում ելին , բերնից ու աչքերից կայծ և րոց եր դուրս դալի հետ խառնված :

— Սատանա ! — ճաց նու ուժասպառ ու աչքերն ակելի լայն բաց արած ընկափ զետին :

Քանդված տների խորշերից մարդիկ գուրս թափվեցին, Նազըմ հանըմին ողնության յեկան, իսկ նա մատը անկած դեպի այն քանդված պարիսպը՝ կրկնում եր դաժանած.

— Սատանա՛, սատանա՛...

Բոլոր մարդկանց դեմքերի վրա նստել եր զար- մանքի շեշտը, և բոլորը յերեսները յետ շրջեցին: Ի՞նչ: Քանդված պատի վրա մոխրագույն կատուն մեջքն եր տաքացնում իրիկնային արևի ջերմ ճառաղայթների տակ:

Նազըմ հանըմը հիվանդացավ:

Ամեն որ նա նիհարում ու գեղնում եր բարակ մոմի աղես:

Նա իր մահը մոտ եր զըռում, թվում եր, զռան յետեն և կանգնած թե՛ իր մահը և թե իր խոռված ո- ջախի հաշուությունն ու մի որ դուռը կրնկի վրա բա- նալով ներո կմտնի:

Յուրօք քամին հոնդում, դարնվում եր քանդված պատերին ու փողոցներից մաքրելով քշում տանում ա- մեն ինչ, տերեաթափ ծառերի կատարները ճոճելով:

Աշուն եր:

Ամեն որ Միրզան ու Նաստիլան գնում եյին ա- կումբ, իսկ Աբասը՝ «չայիսանա»:

Յերիտ-ակումբը գունավոր տների ու խանութների դիմավոր ու լուսաշատ փողոցում եր գտնվում: Մյուս բոլոր կիսաքանդ տներից տարբերվում եր նա իր անսո- վոր ահսքով: Մի կայծ եր կարծես, վոր ընկել եր դու- նավոր մեջիդի կողքին, կեպավոր գլխարկներով մարդ- կանց մաքերը հրդեհելու: Ակումբը մի մեծ դուռ ուներ, ու մարմարե լին սանդուխքները վերնահարկն եյին յե- նում: Մենյակներ կային անթիվ ու մի մեծ դահլիճ ե-

լեկտրական լուսով վողողված: Պատերին՝ նկարներ ան- թիվ և թերթ: Սենյակներում մաքուր՝ ամեն որ ժողով կար, պարապմունք, իսկ շաբաթ կամ կիրակի որեւը՝ դահլիճում ներկայացում:

Մաքուր սենյակներից մեկի գուան վրա դրված եր՝ «Անաստվածների խմբակ»: Դուռը բացվեց, Նաստիլան դուրս յելավ ֆաղեյտայի հետ. քիչ հետո՝ ուրիշ մի խումբ ել:

Նաստիլան ու ֆաղեյտան մտան գիմացի սենյակը, վորտեղ յերկար սեղանների առջև թերթեր ու գրքեր եյին կարդում: Կողքի սենյակը մի բարակ պատով եր բաժանվում. ակումբի խաղասենյակն եր այն: Ավելի հեռու մի սենյակ կար, վորտեղ նվազում եյին ու յեր- գում: Ու ելի սենյակներ անթիվ, մեկում բջիջի կամ բյուրոյի ժողով, մյուսում գրամիմբակի փորձ, յեր- բորբում պատի թերթն եյին խմբագրում:

Աշխատանք ու գործ բազմաղան և վո՞ր մեկը թվեմ: Ակումբը գիշերով փեթակի յեր նմանվում: Ակումբի վարիչը բարակ բեղերով ընկերական մի տղա յեր:

Մի որ Նաստիլան ասաց.

— Ֆաղեյտա՛, գալիս ե՞ս ինձ հետ:

— Ո՞ւր:

— Տուն:

— Ինչո՞ւ: Զլինի՞ թե առանց Միրզայի չես կաբոզ:

— Նազըմ անան հիմանդ ե:

— Բժիշկ կանչե՞լ եք սկի:

— Դեռ չե՛, բարան շարունակ կովում ե Միրզայի հետ:

— Ինչո՞ւ:

— Ասում ե կնիկդ առ, գնա:

— Իսկ Միրզան ուղո՞ւմ ե :

— Մենյակ չկա՛ :
— Նաստիլու, վազը շուտ կդառ, վոր վերջին դառը
առջարկենք:

— Վո՞րն ե վերջինը :

— «Կրոնը . . .»

— Հա՛, դիտեմ :

Նաստիլուն փողոցով դնում եր գեպի տուն :

Քաղաքի տրյա ծայրամասի խարխուլ տների նոր
ուժն եր ամբարվում յերիտահումբում :

Միրզան աանը նստած նյութեր եր հավաքում. րջի-
ջում պետք ե խոսեր նոր կենցաղի մասին :

Նազրմ հանրմը հիվանդ՝ հողու հոտ կորիք եր տա-
լիս:

Մենյակում մերթ մոր տներոցը, մերթ Միրզայի
զրշի ճաճուցն եր լսվում :

— Միրզա՛, մեռնում եմ՛, որ հնամքս քեզ ասեմ :

— Հե՞ :

Մեռնում եմ, դնու մոլլային կանչի, թող հողուն
համար նամազ ամի:

Միրզան չեր ուզամ զնալ, ջղայնությունից ձեռքի
թաւղթը ճմրթում եր: Նա մտքում մտածում եր. «Ի՞ր-
ջում կնախատնին, վոր իմանան, կառեն — ել ի՞նչ կոմ յե-
րիտական ե. զիշերով զնացել մոլլի զուռն ե թակել»:
Մոքերը ծանր մուրճերի պես՝ Միրզայի դանդի պատե-
րը թակեցին: Նա տառանվեց. գնա՞լ, թե չե: Ալլու-
կյանը ծանր եր, կարծես ուզամ եր, վոր մեկն իրեն
ողնության գա: «Դանար կկանդնեմ մի քիչ. կառեն՝
դնացի», մտածեց Միրզան: Յերբ դուրս յելավ, չկա-
րողացավ գանը կանգնել: «Ե՛, գնամ, զիշեր ե, ո՞վ
պիտի տեսնի, մե՛րս ե, մեռնում ե, թող հանգիստ մեռ-

նի: Յես խո չե՞մ փոխվի, ելի կամ յերիտական եմ: Բայց
դուցե մոլլան ոգնի: Յես վոր մնամ, հոգին խո յետ
չե՞մ քերի»:

Միրզան գունավոր մեջիդն եր դնում:

Սենյակը քարացել եր. միայն նազրմ հանըմն եր
անքում փչացած ժամացույցի պես: Փողոցում և բա-
կում աշնան քոմին եր պարում, դուռ ու լուսամուռ
ձեծելով:

— Աքասը զնացել և վազուց մոլլին կանչելու. Միր-
զան էլ յետելոց գնաց: Խնչի ուշացան:

Քամին պատուհանը բացեց ու լինեց սենյակամ:
Լամպն ընկավ սեղանին. սենյակի լուսը խամրեց: Այս-
քում ելին սիսոցի ծայրն ու սեղանը:

Նազրմ հանըմը շարժում եր ձեռները, կարծես թե
հոգեարքի մեջ լիներ: Ուզեց բարձրանալ, բայց շարժ-
կել անզամ չկարողացավ:

— Ո՞վ կա եղանգ, այսից . . .

Սենյակը ծխով եր լցվում:

Նեղ փողոցով քայլում եր Նաստիլուն:

Դիմացի անկյունից ծովեց մեկը:

— Ինչքան Միրզային նման ե, — մտածեց Նաստի-
լուն:

— Միրզա՞ :

— ՀԵ՞ :

— Դո՞ւն ես:

— Հա՛, մի մտխենա, Նաստիլուս:

— Զեմ վախում: Եղ ո՞ւր:

Տիրեց լուսթյուն:

— Բարձան ելի՞ կոմից:

— ԶԵ՞ :

- Հապա ինչո՞ւ յետ թթվել:
- Անան մեռնում եւ առում ե՞ւ դեա մովին կանչք:
- Մովին: Դու յել գնո՞ւմ ես: Չե՛, դու առուն
դեա, յես կերթամ, թե կուղես, դու յել արի:
- Չե՛, անան մհնակ ե:

ՍԵՆՅԱԿԸ ծխով եր լցվում: Բոցը սեղանից իջել եր Հաստակին: Նազըմ հանըմը խեղդվում եր ծխի մեջ, յերբ Միրզան դուռը բացեց:

Բակի սանդուխքների վրա վոտնաձայն լսվեց: Նաստիլան ու ակնոցավոր մի մարդ ներս մտան սենյակ:

Միրզայի համար, վորը տուն վերադառնալիս մտածում եր. «Եղ վո՞նց, Նաստիլան մովին կանչելո՞ւ դնաց», ամեն ինչ պարզվեց:

Ակնոցավոր մարդը մոտեցավ Նազըմ հանըմին, նոյեց նրան ու զլուխը շարժեց: Նազըմ հանըմը դարձացած նայում եր ակնոցավոր մարդուն: Յերբ ակնոցավորը դվարվել ծածկեց դնալու, Նաստիլան լսմալը դուրս բերեց սանդուխքները լուսավորելու:

— Զի ասլի, սառը ձայնով առաց ակնոցավոր բժիշկը:

Դիմացից գալիս ելին յերկու հոգի. մեկը Աբաս եր, մյուսը մովեն: Նրանք մի վայրկյան անշարժ իրար նայեցին ու ակնոցավորը դնաց:

Նաստիլան լամալը տվեց Միրզային ու առաջ անցով:

— Գնա. քանի մենք ես տանն ենք, քո վոտքը թող մեր շեմքում չինի. — ասաց նա միրուքավոր մարդուն, մատը գեղի դուռը տնկած:

— Նաստիլա, մ'թք, յետ քեզ ցույց կտամ մեծի

պատիվն իմանալ, — գոռաց Աբասը մարմինն առաջ թեքելով: Այդ պահին Միրզան կանգնեց յերկուսի մեջ տեղը և ձեռներն ողի մեջ խաչ արեց:

— Զհամարձակվես, բաբա՛:

Միրուքավորը սատանի նման անհետացել եր:

Այն յերեկո Աբասը «չայխանի» կոտրտված սանդուխքներով վերնահարկն եր յելնում:

Մարզիկ յեկան քաղաքի այդ ծայրամասը, փողոցները չափեցին, զուալոր քառանկյունի յերկար սյուներ տնկեցին: Այնուհետև նորից յեկան, քանդեցին նեղ փողոցները, պատերը հարթեցին ապակու նման: Քանդեցին և Միրզայինց տան դրսի պատերը:

Բանութերները քանդված պատերի հողերի միջից ինչ վոր յերկար թղթեր զտան անհասկանալի գրերով. մի քանիսը հայհոյեցին ու ժպտացին. բայց մեկն իր զըրպանը խոթեց խորհրդավոր թղթերը: Քիչ հետո նա թղթերի ծայրից պատառելով իր թութունը փաթաթեց, քանդված քարերի վրա նստած:

Այն հին տան նման՝ ինչ վոր մեկը քանդում եր Նազըմ հանըմի հողին և նա մինչեւ իր վերջին շունչը փչելիս հավատացած եր, վոր այն թղթերը հաշոտություն կրեւն խոսված ընտանիքին: Մի լուսադեմի նրա արյունը յերակներում սառեց, յերբ նրանց անդիմացը նոր չենքի հիմքեր ելին զցում:

Նազըմ հանըմի մահից հետո Աբասն ամեն որ գնում էր «չայխանի» վերնահարկը. պատահում ելին զիշերներ եւ, վոր տուն չեր գնում. քնում եր հենց այնտեղ:

— Են տունը յետ չեմ երթա՛, թող իսալսը չասի, թէ Աբասը նամուս չունի:

Այն որը «չայխանեն» թափառական աշուղներ ելին յեկել հեռո՞ւ-հեռո՞ւ յերկրներից : Սեխանման գլուխ-ները - շըջապատել ելին նրանց : «Չայխանի» խանձահոռ ողն այն որը լցված եր աշուղների սադաֆավոր թառի ճկուն լարերի, հնչյուններով : Աբասը նստած եր «չայ-խանի» մի անկյունում, լսում եր գլուխը՝ խոնարհած կրծքին և նրան թվում եր՝ իր հոգուն մոտ ու հարազատ յերգերի միջով կարող և հասնել յերկրները ուրիշ :

Մի շաբթից հետո գերլիշի նման աշուղները դնացին : Աբասը վրացին եր ու ինքն ել գնաց հեռո՞ւ-հեռո՞ւ յերկրներ : Վերջին անդամ, յեր նայեց իր խոռված տանը, նրա աչքերի անկյուններից մի զույգ կաթիլներ հուլունքների պես պոկլեցին ու ընկան մազոտ այսերեն : Մի վերջին հայացք ել գցեց Նաղըմ հանըմի գերեզմանին ու մեջքը ըրջելով քայլեց աշուղների հետ : Նա գնում եր ուրիշ յերկրներ, ուր կինն իր չաղրայի մեջ գեռ նման եր բերանը կապ քսակի մեջ լցրած վոսկու, ուր մարդիկ ասլում են պապերի աղաթով :

Ամիսներ անցան, նրանք տեղափոխվեցին նոր քնարարան :

Կյանքը փոխվում, կորցնում եր իր հնամյա յերան-գը և մի նոր ուժ խլրտումով աճում եր քաղաքի այդ խարխուլ ծայրամասում :

1928

114

ՍՈՍԻՆԵՐՆ ԱՂՄԿՈՒՄ ԵՆ

Ա.

Մանուկը ծնվելիս լացեց, իսկ ծնողները ժողոա-ցին...

Կոմյերիտ Ցողիկը փոքրիկ տիկին դարձավ, սնեց մանկան ու կառավարեց խոհանոցը : Նա թողեց աշխա-տանքը դրսի, ընկերներին իրա ու կյանքն սկսված—սո-սիների պես աղմկուն : Յեկ մայրությունն ամփոփեց նրան—հին տնակի նեղ պատերի ներսը :

... Լուսնի պուռնկը կատվի պես մեջքը կոր՝ նստում եր փոքրիկ անակի պարտեղի ակացիի ուսե-րին ու նրա վրա վոնում եր լուսնահաչ մի շուն :

Բ.

Փոքրիկ տիկինն ամեն առավոտ ցողի հետ ջրում եր պատուհանների ծաղկամանները և ցանկապատի կո-ղերի տակ բուսած շեկ արելածաղիկներն ու անուշ խնձորենին :

Հետ հրով վառված հորիզոնից յերկու չակ տա-րածվում ելին քաղաքի սղիտակ շենքերի վրա . ճանա-պարհին դոփում ելին ինչ վոր ուժեղ վոտքեր ու քայ-լում շտապ-շտապ : Փոքրիկ տիկինը խոհանոց եր մըտ-նում, պատից մի զույգ հին կոչիկ կար կախ, նա նա-յում եր նրանց ու ինչ վոր բան հիշում : Փոքրիկ տիկինը նայում եր ծաղկանոցի արեվածաղիկների ու սիմինդի

115

տերելսերին մրտով, Հիշում եր հեռու մի դազդյահ, գումանալոր չթեր հիշում: Հետո նա մանկան հաղցնում եր չթեր կարգած մի շապիկ, վորի վրա այնպես ծանոթ դործած յերկու կիսված արևածաղիկ կար կախ:

Յողիկը վորբաշխարհից գնաց գործարան, յոթը տարի դազդյահի մոտ գունավոր չթեր դործեց ու հետո ամուսնացավ Տարասի հետ:

Դ.

Թափում եյին պատի որացույցի թերթիկները և աճում եր մանուկը:

Իրիկունն իջնում քր վորքրիկ տնակի ու ծաղկանոցի ցանկապատի ուսերին:

Նրանք բոլորվում եյին սպիտակ սեղանի շուրջը, վորի վրա յեռում եր դեղին ինքնայեռը:

Պատի վրայից ժպտում եր իլյիչը խորն աչքերով:

Տարասը մանկանն առնում եր ծնկների վրա ու նայում իլլիչին: Թվում եր նրան. կախվում են ճերմակ մի կտավ, թուած որերից պայծառանում ե վրան նորից կապույտ մի գեղեր. աղմկում են վորքրիկ քաղաքի սոսիները սվավուն ու յեղեգնուտը հեռու: Յեկ քսվելով պատերին՝ ինքը վերադառնում ե տուն—կտրված ականջը թշնամուն թողած:

Յերկրի պայքարում հերոսական այն սե րեղերով վտիտ տղան ականջը զոհեց թշնամու սըին: Ու հետո հիշում եր նա, թե ինչպես մազութոս հողի վրա արյան կարմիր հետքեր մնացին...

Ցանկապատի մոտ որորվում եյին արևածաղիկները, իլյիչը նորից ժպտում եղ մանկան, իսկ սպիտակ կտավի վրա ավելի պայծառանում արյան կարմիր հետքերը...)

Հետո քնառմ եր մանուկը, վոր աճի, իսկ Տարասը կարգում եր ու գրքի թերթերի միջից բարձրանում եր իլլիչը:

Յողիկը կարսուի հիշում եր խոհանոցի գրսի աշխարհն ու Տարասին հարցնում նրա մասին:

... Արուցում արթնանում և լալիս եր մանուկը:

Դ.

Յողիկը մտածում եր հաճախ, թե կյանքն ինչքան տաշջ ե տարիել Տարասին ու ինչ վոր բան փոխվել ե նրա մէջ, նա թողել ե իր նախկին ընկերներին:

Այս, Տարասը գարձել եր լուակյաց, առաջվա պես կատակներ ել չեր սիրում, կարծես մոռացել եր ամենը, ինչ յեղել եր սկզբում:

Տարասը վորքրիկ մանկանն ել չեր նստեցնում ծընկների վրա: Ինչ վոր բան ճնշում եր նրան և թվում այնպես նեղ ու վորքրիկ:

Ժպտում եր Յողիկը, իսկ Տարասը լուռ նայում հատակին: Տիրում եր տիկինը:

Տարասին թվում եր միայն, վոր զգում ե արդեն լայն կյանքի խորությունն ու յերկու ձեռքով ուզում եր ամուր գրկել այն, սակայն վորքրիկ ընտանիքը քաշում եր նրա ուսերից:

Փուլմ եր խոհանոցի հոտը: Ու հաճախ վիճում եյին նրանք: Խոհանոցում այրվում եր ինքնայեռը:

Ե.

Գունատ աշուն:

Պայծառացած աթելը յելավ, հալվեց քամու գեմ ծեծվող ծառերի վրա, թափվեց ծառերի վոսկին: Սառը քամին պարեց թիթեղի տանիքների, բակերի ու յերկաթե լարերի վրա, որորեց ծաղկանոցի ցանկապատի տակ

բուսած սիմինդի ու արևածալիկների չորացած տերեւները : Յեկավ աշնան անձրեւ, թափվեց ծառերի ու չեղերի վրա :

Յեկ որորվեցին գիշերային լույսերը պայծառ՝ փողոցների թաց ու ամայի մայթերի վրա :

... Տարասի յետիից, յերեխան կրծքին սեղմած գողեգող գնում եր փոքրիկ տիկինը : Գնում եր ու մտածում :

Գնում եր Տարասը :

Նա ծովեց ու թրջված ուսերով ներս մտավ ուրիշ տան ոտար դռներից :

Կանդնեց փոքրիկ տիկինը և նրա կրծքի տակ ինչ վոր տաք բան ծանրանալով բարձրացավ ու սեղմեց կոկորդը : Հետո բերանի անկյունները կախվեցին ու կոկորդը շարժվեց : Նա հենվեց փողոցի անկյունի եեկտրական սյանը, յերկար-յերկար նայեց այն գոներին, ուր ներս մտավ Տարասը :

Գիշերը սև վարսերը թափեց քաղաքի վրա ու անձրեկ տակ ծեծվեցին—սոսիներն աղմկող... Հեռու ինչ վոր տեղ աքլորները կանչեցին, մեկը ներսում պտտցընց վեկեկտրական լույսի կոճակն ու ամոթից սևացան պատուհանների ապակիները : Ներսում դատարկ չերը զըրվեցին հատակին և փշրվեց մերկ կնոջ մի քանդակ :

Կարծես որորվեցին փողոցի լույսերն ու մայթերը և փոքրիկ տիկինը յերեխան որկած բնկավ մայթերի վրա :

2.

Մի որ Տարասը փող թողեց, նայեց մանկան ու հեռացավ զժդոհ : Նա և՛ հեռանում եր, և՛ մնում : Տարասին թվում եր կտրվում և ինչ վոր խորը բան : Ստո-

րակեաի նման փոքրիկ յերեխան, վորը տիկնոջը բաժանում եր զբսի աշխարհից, կամուրջի պես կապում եր Տարասին նրա հետ :

... Բայց Տարասը յերերալով անցավ կամուրջի մյուս ափը :

Փոքրիկ տիկինը տիտուր նայեց հեռացող մարդու ծուռ ուսերին, նայեց յերեխայի որորոցին . տիկինը լուցեց ու յերեխան :

Յովիկը նայեց փոքրիկ սենյակի պատից վար ժըպտացող ու խորն աչքերով իւլիչին : Նա նորից հիշեց այնպես հեռվից գունավոր չժեր ու կոմյերիտ աշխարհ :

Իջավ ու ծանրացավ խորը տիտրություն :
Իսկ կանաչ ցանկապատի ուսերին որորվեց որպատուր ակացին :

կ.

Աշնան առավուած յերք լուսանում և քաղաքի վրա, թվում ե զիշերվա անձրեւ լվացել և մաքրել և շենքերի ու ծառերի փոշին :

Յեկ մի առավոտ, յերք ճեղքվում եր խավարն ու սոսիներն եյին աղմկում, փոքրիկ տիկինն անցավ խոհանոցի նեղ պատերի կամուրջից դեպի հինը, վորն սկսվելու յեր նորից :

Այն լուսապատճենուր առավուայան, յերք կանչեցին շշակիները հորիդոնից ու դոփեցին այնքան վոտքեր, փոքրիկ տիկինն ել չնայեց իսոհանոցի սպատից կախած կոշիկներին մաշված : Նա մանկանը թողեց գործարանի նոր մանկատանը և նորից գործեց գունավոր չթեր, գործեց ու հիշեց բակի ծաղկանոցի սիմինդները, մանկան շապկի վրա կիսված յերկու արեածաղիկն ու այն մութ ապակիները :

Բանվորական փոքրիկ քաղաքի վրա հալչում եր արել բրոնդե ու քայլում եր տիկինը—այն մայթերի վրայով, ուր ինքն ընկալ մի գիշեր։ Քայլում եր տիկինը, ուռչում եր սիրալ նրա և ուսերի վրա տանում ինչ վոր խորը թեթեվություն։ Բարձրանում եր արել և մանկատան նոր աշխարհում աճում խարսյաշահեր մանուկը, վորը դեռ նոր-նոր եր հասունանալու—սերնդի սիրված մանուկը։

Յեզ շոտով, շատ շոտով կդա նա, կենի մանկատան պատերից, այս հին ու նոր սերնդի մանուկը, վորը չի տեսել դասակարգի պայքարը մեր։ Կրարձրանա նա, դալիքի նոր մարդը, յերբ չեն լինի սե ու մութ ապակինը։

Ամսական լիալուսնի արծաթե սառն ափսեն կախվում եր շեկ բլլների ու հասուն արտերի վրա։ Հանդերում կակաջն որորմեց լուսնի դեմ ու ծնվեցին ի՞նչ-քան մանուկ... Գիշերաչյա լճակի յեղերքին հեռու՝ յեղեգը վորպես զուռնաչի փէց հարբած յեղանակ, դուրտերը պարեցին ու յեղալ լուսնի հարսանիք։

թ.

Տարասը վոչ-վոքի չողատմեց այն մասին, թե ինչպես պատահ, վոր մի որ ինքը լքեց այն՝ ի՞նչ լսությում քաշու եր իրեն ու յետեղից դնաց։ Տարասը կը զբում քաշու պինդորի ամոթով վերադարձավ տուն։ Նա նայեց հին ծաղկանոցի արևածաղիկներին, սիրինդներին որորվող և այդ բոլորը կարոտով քաշում էին նրան ու թվում այնպես հարազատ։

Նա մտավ խոհանոց ու մաքրեց կոչիկների փոշին։

Տարասն ու Ցողիկը նայեցին իրաք։ Փոքրիկ արկնը ժամացար։ Տարասը զլուխը քարչ նայեց յերեխականը ժամացարի որորոցին։ Նրանք ժամացարին, բայց որոշի գատարկ որորոցին։ Նրանք ժամացարին, բայց որոշի գատարկ որոր բան։ Ցողիկը չխանդեց վերադար խուր եր ինչ վոր բան։ Ցողիկը չխանդեց վերադար խուր եր վիշտ ու զբում։

Յերկու չչակ կանչեցին, Տարասը նայեց խոհանոցի պատից կախ կոչիկներին մաշված, հետո նբանք խոհեցին յերկար։

Յել հեռացավ Տարասը՝ նայելով շեկ արեածարկիներին ու փոքրիկ տիկինն անթախիծ նայեց հեռացող սկ բեղերտվ մարզու ուսերին։

Գնում եր Տարասն ու մտածում...

Յեթե պայքար լիներ դասակարգի համար, Տարասը դըմհ կամ եր կզբակեր թշնամու դիրքերը, բայց նա զնում եր պաշտմած։

Գնում եր Տարասը, իսկ փոքրիկ տիկինը մտածում։ Ո՞ւր և ինչի՞ համար եր զնում նա, և կամ կմերտքանա՞ր նորից։

... իսկ սոսիներն աղմկում ելին փոքրիկ տիկինու առաջ և քաղաքի վքա։

29-30 թ.

ՑԱՆԿ

	ՑԱՆԿ
1. Բանականիկ	3
2. Մասնա	75
3. Կառապան	82
4. Երես	90
5. Գումավառ մեջքի պատճեն	99
6. Սուբթիեր պատճեն	115



ՀՀ Ազգային գրադարան



NL0358941

49488

123-

40 члн. (3³/₄ д.)

ПАЯЗАТ
МЕЛКИЕ ЛЮДИ

Госиздат ССР Армении
Эревань 1931